2025, ՓԵՏՐՎԱՐ Բ, ԹԻՎ 4 (672)

Էջմիածնի Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Սուրբ պատարագ և շնորհաբաշխություն Սուրբ Ղևոնդյանց քահանաների տոնի առիթով

Փետրվարի 25-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Ղևոնդյանց քահանաների հիշատակը: Այս առիթով Միածնաէջ Մայր տաճարում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց սուրբ պատարագ:

Սրբազան արարողությանը ներկա էին հայաստանյան թեմերում և եկեղեցական կառույցներում սպասավորող շուրջ 250 եկեղեցական, թեմական առաջնորդ, Մայր Աթոռի միաբանությունը և բազմաթիվ հավատավոր հայորդիներ:

Պատարագիչն էր Շիրակի թեմի Գյումրիի Սուրբ Նշան եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Նշան քհն. Պանֆյորովը:

Տեր հայրը, իր քարոզում անդրադառնալով օրվա խորհրդին, ընդգծեց, որ Ղևոնդյանց քահանաները Վարդանանց «Վասն հայրենեաց և վասն հաւատոյ» պատերազմի ոգեշնչողները դարձան:

«Ղևոնդյանք և Վարդանանք ո՛չ միայն մեզ, այլև ամբողջ աշխարհին սովորեցրին, որ երբ մի ժողովրդի հայրենիքն ու հավատքը վտանգի են ենթարկված, ամբողջ ազգը պայքարի դրոշ պետք է պարզի, ամբողջ ազգը պետք է զինվորագրվի՝ առաջնորդ ունենալով Աստծուն: Հավատքի ու հայրենիքի աստվածապարգև տեսիլքն ունենալով՝ չվախենա թշնամուց և ունկնդիր լինի ու վստահի Աստվածաշնչի խոսքին. «Նրանցից մի՛ վախեցեք, հիշեցեք մեր մեծազոր և ահարկու Աստծուն և պատերազմեցեք ձեր եղբայրների, կանանց և որդիների, դուստրերի և ձեր տների համար (Նեեմիա 4.14)»»,— ասաց տեր Նշանը՝ հավելելով, որ Ղևոնդյանք իրենց կյանքի օրինակով այսօր էլ կոչ են ուղղում մեզ՝ պաշտպան լինելու քրիստոնեական մեր հավատքին ու վտանգված հայրենիքին:

Սուրբ պատարագի ավարտին քահանայից դասը մեկտեղվեց Գևորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում: Հավաքի առիթով ողջույնի խոսք ասաց Շիրակի թեմի առաջնորդ և քահանայից հավաքների կազմակերպիչ հանձնախմբի պատասխանատու Տ. Միքայել արք. Աջապահյանը:

Այնուհետև տեղի ունեցավ ավանդական շնորհաբաշխությունը:

Ի գնահատություն Հայոց եկեղեցու անդաստանում երկարամյա վաստակի, նվիրյալ և արդյունավոր հովվական ծառայության՝ մի շարք եկեղեցականների շնորհվեցին ավագ քահանայության պատիվ, ծաղկյա փիլոն և լանջախաչ կրելու իրավունք:

Ավագ քահանայության պատվի արժանացան ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմից Տ. Վազգեն քհն. Բոյաջյանը, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմից Տ. Վազգեն քհն. Գուզոյանը, Տ. Ստեփանոս քհն. Դուդուկչյանը, Տ. Գրիգոր քհն. Սապունճյանը և Տ. Առաքել քհն. Ալճալյանը:

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհվեց Սյունյաց թեմից Տ. Ահարոն քհն. Մելքումյանին, Տ. Շիրակ քհն. Խանոյանին, Տ. Ավետիք քհն. Մարտիրոսյանին և Տ. Ընծա քհն. Միրզոյանին, Շիրակի թեմից՝ Տ. Հարություն քհն. Պետրոսյանին և Տ. Տիգրան քհն. Մխիթարյանին, Մասյացոտնի թեմից՝ Տ. Երվանդ քհն. Բաբայանին և Տ. Միքայել քհն. Նուրիջանյանին, Արթիկի թեմից՝ Տ. Լևոն քհն. Հովհաննիսյանին, Գեղարքունյանց թեմից՝ Տ. Ստեփանոս քհն. Իգնաթևոսյանին, Գուգարաց թեմից՝ Տ. Ներսես քհն. Ղալայանին, Արագածոտնի թեմից՝ Տ. Վազգեն քհն. Հովհաննիսյանին, Կրասնոդարի և Հյուսիսային Կովկասի հայոց թեմից՝ Տ. Մուշեղ քհն. Խաչատրյանին, Ֆրանսիայի հայոց թեմից՝ Տ. Արշեն քհն. Մովսեսյանին, Տ. Բաբկեն քհն. Ստեփանյանին, Տ. Սահակ քհն. Ղարիբյանին և Տ. Շահե քհն. Նազարյանին, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմից՝ Տ. Հովսեփ քհն. Կարապետյանին, Տ. Գաբրիել քհն. Մուրաճյանին, Տ. Խաչատուր քհն. Քեսաբլյանին և Տ. Աբրահամ քհն. Օհանեսյանին:

Քահանայական լանջախաչ կրելու իրավունքի արժանացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանատան ընդհանուր բաժնի գործավար Տ. Կոմիտաս քհն. Ղևոնդյանը, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգևոր սպասավոր Տ. Վազգեն քհն. Անդրեասյանը, Արարատյան հայրապետական թեմից՝ Տ. Վարդան քհն. Հայրապետյանը, Սյունյաց թեմից՝ Տ. Դավիթ քհն. Գիշյանը, Կոտայքի թեմից՝ Տ. Վարդան քհն. Ներսիսյանը, Արագածոտնի թեմից՝ Տ. Նարեկ քհն. Սարգսյանը, և ՀՀ Զինված ուժերի հոգևոր առաջնորդությունից՝ Տ. Ղևոնդ քհն. Հայրապետյանը:

Պարգևաբաշխության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Սրբոց Ղևոնդյանց տոնի առիթով իր օրհնությունն ու հայրապետական պատգամը բերելով հոգևորականաց դասին, մեծապես կարևորեց քահանայից հավաքը եկեղեցականաց ոգու զորացման, հոգևոր ծառայության առավել արդյունավորման և ծառայության մեջ նոր առաջնահերթությունների սահմանման առումով:

«Սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնն առանձնահատուկ ցուցիչ է հայ եկեղեցականի օրինակելի կերպարի ընկալման և ազգային-եկեղեցական կյանքում նրա առաքելության ու անձնազոհ սպասավորության վերարժևորման տեսանկյունից»,— նշեց Նորին Սրբությունը՝ նկատելով, որ Ղևոնդյանց ու Վարդանանց տոները պատեհ առիթ են խորհելու ազգային ինքնության և արժեքների մասին՝ որպես հայոց ազգի լինելության ու հարատևության երաշխիքներ:

Իր խոսքում Հայոց Հայրապետն ընդգծեց, որ եկեղեցու առաքելության մեջ միաձուլված են հոգեփրկչական ու ազգապահպան ծառայությունները. «Սիրելի՛ հոգևոր հայրեր, դուք գիտեք, թե որքան միաձուլված են մեր առաքելության մեջ հոգեփրկչական ու ազգապահպան ծառայությունները: ➥ էջ 2

Սուրբ Վարդանանց տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Փետրվարի 27-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սրբոց Վարդանանց տոնը: Այս առիթով Միածնաէջ Մայր տաճարում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց սուրբ և անմահ պատարագ:

Պատարագիչն էր Գևորգյան հոգևոր ճեմարանի և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի տեսուչ Տ. Շահե ծ. վրդ. Անանյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ և հավատավոր բազմաթիվ հայորդիներ:

Իր քարոզում հայր սուրբն անդրադարձավ Սրբոց Վարդանանց տոնի խորհրդին՝ մասնավորապես նշելով. «Վարդանանց խորհուրդը մեծ է, մեծ է ոչ թե որովհետև եկեղեցական տոն է կամ մեծ ճակատամարտի հիշատակությունն է, այլ որովհետև բոլորիս մեջ արթացնում է երկու կարևորագույն, մեր գոյության համար ամենաանհրաժեշտ հասկացություններ՝ հայրենասիրություն և աստվածսիրություն: 1036 նահատակները հավաքական խորհրդանիշն են այն ամենի, ինչը բոլոր դարերում պակասել է մեզանում և բոլոր ժամանակներում համարվել է գերագույն առաքինություն՝ աստվածսիրություն և հայրենասիրություն:

Վարդանանց խորհուրդն իր բովանդակությամբ մեզ համար դատարկ կլինի, եթե այս երկու հասկացությունները մենք չկապենք իրար և չհասկանանք, որ Վարդանանք այս երկու սրբազնագույն առաքինությունների համար զոհաբերեցին ամենաթանկը՝ իրենց կյանքը, որով և վկայեցին Քրիստոսին ու իրենց վկայության մեջ միասնական էին:

Սիրելինե՛ր, այս երկու հասկացությունները՝ վկայություն և միասնականություն, լավագույնս բնորոշում են Սրբոց Վարդանանց խորհուրդը»:

Հայր Շահեն նաև միաբանության և ներկա հավատացյալ ժողովրդի անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետին անվանակոչության օրվա կապակցությամբ:

Հավարտ սուրբ պատարագի, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի, կատարվեց հայրապետական մաղթանք:

Հոգևոր դասն ու ժողովուրդը միասնական աղոթք բարձրացրին առ Աստված՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության անսասանության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավետ պայծառության և Նորին Սրբության կենաց արևշատության ու արդյունավոր հովվապետության համար:

Սուրբ պատարագ և շնորհաբաշխություն Սուրբ Ղևոնդյանց քահանաների տոնի առիթով

➥ էջ 1

Քրիստոնեությունը հայոց ազգի մաշկի գույնն է. այսպես է Սուրբ Եղիշե պատմիչը հանրահռչակում մեր հավատքի և ազգային ինքնության անբաժանելի միասնությունը: Այս ճշմարիտ հաստատումը դարձել է ազգային մեր դավանանքի հիմնական և առանցքային համոզմունքներից ու գաղափարներից մեկը: Հետևաբար՝ հայությանը հոգևոր նկարագրով, ազգային դիմագծով ամուր պահելու և մեր ժողովրդի միաբանությունն ու լուսավոր գալիքը ապահովելու համար պետք է զորացնել ու պաշտպանել մեր սուրբ հավատքն առ Աստված: Հավատքը պարզապես Աստծու գոյության ճանաչումը չէ, այլ այն իրականության ընդունումը, որ Աստված հարատև ներկա է մեր կյանքում, և մենք պատասխանատվություն ունենք Աստծու առջև: Հավատքը Աստծու պատվիրաններին հավատարմություն դրսևորելու հանձնառությունն է, հավատքը բարոյական սկզբունքներին ու Քրիստոսի վարդապետությանը հետևելու անընդմիջելի ընթացքն է: Հավատքը անխախտ հիմքն է ամուր ընտանիքի, ամուր հասարակության, որտեղ գերակայում են արդարությունը, համերաշխությունը, սերը և գործակցությունը»:



Նորին Սրբությունն անդրադարձավ նաև հայրենիքի ու աշխարհասփյուռ հայության առջև ծառացած մարտահրավերներին՝ պայմանավորված ոչ միայն Արցախի կորստով, հազարավոր զոհերով, անհայտ կորած և տակավին գերության մեջ գտնվող հայորդիներով, այլև մեր կյանքում հայի ինքնության բաղադրիչների թիրախավորմամբ և աղճատմամբ:

Այս առնչությամբ Հայոց Հովվապետը նշեց. «Արդ, հարկ է մեր ժողովրդի մեջ հաստատուն պահել դարերով նվիրագործված արժեհամակարգի, հայրենիքի, Հայոց Եկեղեցու, մեր սրբությունների, մեր պատմական անցյալի վերաբերյալ ճիշտ ընկալումները: Այս ճանապարհով է հնարավոր հզորացնել մեր պետությունը, նպաստել հայրենական կյանքի բարօրությանն ու ապահովությանը: Այս ճանապարհով է հնարավոր ամրապնդել հասարակության մեջ համերաշխության ոգին, պաշտպանել ազգային շահերն ու հիմնարար իրավունքները թե՛ երկրի ներսում և թե՛ երկրից դուրս: Այս նպատակների իրագործման համար մեզ նախ և առաջ պետք են առավել նվիրում ու քաջություն, ազգին ու հայրենիքին ծառայելու բարձր գիտակցություն և հանձնառություն»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց եկեղեցականներին Ղևոնդյանց քահանայից նմանությամբ ծառայել ու գործել և հոգևորականին հարիր խոսքով ու վարքագծով լինել կենդանի քարոզություն հավատացյալների համար, մեծապես ուշադիր լինել, որ ոչ միայն չմսխվի դարերի վաստակը, այլև նորանոր ձեռքբերումներով ավելանա մեր նախնիների փառքը՝ ի շահ ազգի ու հայրենյաց և ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցու:

Վերջում Նորին Սրբությունը, մեկ անգամ ևս իր հայրապետական օրհնությունն ու գնահատանքը բերելով ողջ հոգևոր դասին, աղոթք բարձրացրեց առ Աստված, որ երկնավորի հովանու ներքո խաղաղության, սիրո և համերաշխության շնորհներն առատանան ողջ աշխարհում, համազգային և հայրենական մեր կյանքում:

Հավաքը եզրափակվեց Հայոց Հովվապետի «Պահպանիչ» աղոթքով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Փետրվարի 26-ին

Վերապատրաստման դասընթացների մասնակից եկեղեցականներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց եկեղեցականների վերապատրաստման հերթական դասընթացներին մասնակից քահանաներին, որոնք ժամանել են Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից:

Հայոց Հովվապետը, իր հայրական օրհնությունը բերելով հոգևոր հայրերին, կարևորեց վերապատրաստման դասընթացները, որոնց շրջանակներում հոգևորականները հնարավորություն են ստանում հարստացնելու աստվածաբանական իրենց գիտելիքները, վերանորոգելու իրենց ուխտը, զորանալու Սուրբ Էջմիածնի խորհրդով, միմյանց ներկայացնելու իրենց փորձառությունը և ամրապնդելու միջհամայնքային կապերը, որոնք կնպաստեն իրենց առաքելության առավել արդյունավորմանը:

Անդրադառնալով հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց քահանա հայրերին պատասխանատվության մեծ զգացումով, արիաբար և անսակարկ նվիրումով լծվել առկա հիմնախնդիրների հաղթահարմանը, ուղղորդել ազգի զավակներին հավատի և ճշմարիտ արժեքների ճանապարհով՝ ի զորացումն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն հայ ժողովրդի:

Փետրվարի 28-ին

ՀՀ-ում Իտալիայի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտիին:

Հայոց Հովվապետը, շնորհավորելով դեսպանին դիվանագիտական առաքելության ստանձման առիթով, մաղթեց արդյունավոր գործունեություն՝ ի նպաստ հայ-իտալական բարեկամական հարաբերությունների առավել զորացման:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ երկու ժողովուրդների բարեկամությունն ունի պատմական խոր արմատներ, որի ամրապնդման գործում այսօր էլ կարևոր դերակատարություն ունեն Հայաստանյայց Առաքելական և Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների ջերմ փոխհարաբերությունները:

Իր խոսքում Հայոց Հովվապետը մտահոգությամբ անդրադարձավ Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի շարունակական ոտնձգություններին, Բաքվում մինչ օրս պահվող հայ ռազմագերիների վերադարձման խնդրին, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության ոչնչացման և յուրացման քաղաքականությանը: Այս առնչությամբ Նորին Սրբությունը կարևոր նկատեց միջազգային հանրության հստակ դիրքորոշումը Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումների դատապարտման և կանխման գործում:

Իր հերթին դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտին, խոսելով Հայաստանից ստացած իր տպավորություններից, հավաստիացրեց Վեհափառ Հայրապետին, որ ջանքեր կգործադրի առավել խորացնելու և ընդլայնելու հայ-իտալական համագործակցությունը տարբեր ոլորտներում:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Ոսկան աբդ. Ոսկանյանը ծառայության է նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնում, իսկ Արժանապատիվ Տ. Աշոտ քհն. Աբրահամյանը ծառայության է կոչվել Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմում:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Գիրք նվիրելու օրը Սուրբ Էջմիածնի մատենադարանում

Գիրք նվիրելու օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում կայացավ ցերեկույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի «Մշակույթի և սպորտի կենտրոն»-ի հետ համագործակցությամբ:

Միջոցառումը մեկնարկվեց Տերունական աղոթքով և ՀՀ ազգային օրհներգի կատարմամբ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Տեր Արարատ քհն. Պողոսյանը: Շնորհավորելով ներկաներին օրվա առիթով՝ տեր հայրը նշեց՝ աներկբա ճշմարտություն է, որ ավետարանական «ոչ միայն հացիվ, այլ նաև բանիվ»-ի նախանշմամբ մարտունակ են և պատերազմում հաղթում են այն բանակները, որոնք սպառազինված են ոչ միայն արդիական զենքերով, այլև գիտելիքով ու հոգևոր ուժով:

Օրվա խորհրդի շրջանակներում բանախոսությամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, թումանյանագետ, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանը:

Միջոցառմանը Թումանյանի բանաստեղծությունների ասմունքով և ինքնատիպ երաժշտական կատարումներով հանդես եկան Խոյ համայնքի «Մշակույթի և սպորտի կենտրոն»-ի ենթակայության ներքո գործող երգչախումբը և անհատ կատարողներ (խմբավարներ՝ Անի Ավագյան, Աբրահամ Մելիքյան, Սոնա Շահբազյան):

Միջոցառումն ամփոփվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արարողակարգային և արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի օրհնության խոսքով:

Հավատարիմ մնալով օրվա խորհրդին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մատենադարանի, Ս. Էջմիածնի հրատարակչության և հայաստանյան Աստվածաշնչային ընկերության կողմից հյուրերին նվիրվեց հոգևոր և հայագիտական գրականություն:

Նույն օրը շուրջ երկու հարյուր անուն գրականություն նվիրվեց Զինվորի տանը:

Ցերեկույթ՝ նվիրված Ռուբեն Սևակի ծննդյան 140-ամյակին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Ռուբեն Սևակի անվան թանգարանում փետրվարի 23-ին տեղի ունեցավ միջոցառում՝ ի նշանավորումն գրողի հոբելյանի: Միջոցառմանը ներկա էին հոգևորականներ, ՀՊՄՀ-ի հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներ, բանասիրական ֆակուլտետի ուսանողներ, մշակույթի գործիչներ:

Գրողի կյանքն ու գործը վերարժևորող բանախոսությամբ և ելույթներով հանդես եկան ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, բ. գ. դ. Սուրեն Դանիելյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվի և թանգարանների տնօրեն Տ. Ասողիկ աբդ. Կարապետյանը, Ռուբեն Սևակի անվան թանգարանի տնօրեն Տ. Սևակ քհն. Սարիբեկյանը, գրող, հրապարակախոս Գայանե Աթանեսյանը: Սևակի բանաստեղծություններից ասմունքեցին Գաբրիել Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի դերասանները, հնչեցին երաժշտական վոկալ կատարումներ:

Հանդիսությունն ամփոփեց և օրհնության խոսք հղեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ.Նաթան արք. Հովհաննիսյանը:

Լուրեր թեմերից

22 գնդերեց Սուրբ Սարգսի տոնի առիթով պարգևատրվեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում

Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ և Նավասարդ արք. Կճոյանի նախաձեռնությամբ Սուրբ Սարգսի տոնի առիթով Արարատյան հայրապետական թեմի առաջնորդարանում փետրվարի 16-ին տեղի ունեցավ գնդերեցների պարգևատրման ու խրախուսման արարողություն: Հանդիսությանը ներկա էր նաև ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Մովսես վրդ. Սարգսյանը: Գնդերեցներին ուղղված գնահատողական, ոգեկորով խոսքով հանդես եկան Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանը, Տ. Շահե քհն. Հայրապետյանը: Նավասարդ արք. Կճոյանի կողմից պարգևատրվեցին հանդիսությանը մասնակից 22 գնդերեցները: Պարգևատրման արարողությունն ամփոփվեց համերգով: Երաժշտական կատարումներով հանդես եկան Արարատյան հայրապետական թեմի «Ծաղկախումբ» համախումբը, Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի երգչախումբը, Օպերային թատրոնի մենակատար, միջազգային մրցույթների դափնեկիր Հովհաննես սրկ. Ներսիսյանը:

Արցախյան շարժումն անցյալում ավարտված իրողություն չէ

Սիրելի՛ հավատավոր զավակներ:

37 տարի առաջ՝ փետրվարին, սկիզբ դրվեց հայոց նորագույն պատմության փառահեղ էջերից մեկին՝ Արցախյան շարժմանը: Ժողովրդական կամքի և տոկունության, պայքարի ոգու և անձնվիրումի բացառիկ դրսևորում էր Արցախյան շարժումը: Հիրավի, հերոսական էր Խորհրդային պետության ամբողջատիրական համակարգում (այն պետության, որը, անտեսելով արցախահայության կամքը, Արցախը վանդակել էր միանգամայն արհեստականորեն ստեղծված ադրբեջանական պետության կազմում) իր ձայնը բարձրացնել և ազգովին զինվորագրվել՝ հանուն բաղձալի ազատության, արդարության և մայր հայրենիքին վերամիավորվելու երազանքի իրականացման: Արդյունքը գիտենք բոլորս՝ Արցախի անկախ պետականության ստեղծումը և մաքառումների գնով դրա պահպանումն ու զորացումը:

Արցախյան շարժումը, բացի ազգային համախմբման ճանապարհով անկախության ու համազգային խնդիրների իրականացման գործում ունեցած անգնահատելի նշանակությունից, նաև իր կարևոր տեղն ունի հայի հոգևոր արժեքների հարթությունում: «Արդարների փրկությունը Տիրոջից է, նեղության ժամանակ Նա է նրանց օգնականը» (Սաղմ. 36: 39),– փոխանցում է սաղմոսերգուն: Շարժումը, որի հաջողությանը շատ քչերն էին աշխարհում հավատում, և որը պատանի Դավիթի և հսկա Գողիաթի պայքար էր հիշեցնում, հայության՝ Աստծո հանդեպ խոր հավատքի և այդ հավատքից բխած արդարության ծարավի արտահայտումն էր: Հենց այս իրադարձությունները խթան հանդիսացան, որ 1989 թվականին Վազգեն Ա Հայոց երջանկահիշատակ Հայրապետի սրբատառ կոնդակով վերաբացվի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը:

Սիրելինե՛ր, մենք այսօր ճաշակում ենք հոգևորի ու ազգայինի անկումի, պարտության, Արցախի տարածքային կորստի ու հայության բռնագաղթի դառնությունը: Միևնույն ժամանակ մեզանից շատերն ականատեսն են եղել հոգևոր ու ազգային վերազարթոնքի այդ օրերին, շատերս ունեցել ենք վեհության զգացումի պահեր, տեսել ենք հայի ոգու վերելքը: Հավաքական զոհողության պատրաստակամությունը և այդ զոհողության պտուղներին հավատալը 1988-ին հիմք հանդիսացան Արցախի անկախության ձեռքբերման համար: Դա նշանակում է, որ մեր հավաքական խնդիրների լուծումը պետք է մեր ներսում փնտրենք: Մեր ժողովուրդն արդեն ապացուցել է, որ ունակ է քաջագործության հղացքի, և այսօրեական դժվարությունները չպետք է կոտրեն մեր մեջ ամենակարևորը՝ հավատն Աստծո արդարության զորության ու մեր ուժերի հանդեպ: Եղեք վստահ, որ Տիրոջ օգնությունը չի ուշանա, ինչպես չուշացավ սրանից տասնամյակներ առաջ, եթե մենք կրկին վերագտնենք մեր արժեհամակարգը, միավորենք ժողովրդի ջանքերը՝ մշակութայինից մինչև քաղաքական գործիչներ, եկեղեցականից մինչև զինվորական, մշակից մինչև մտավորական: Հոգևոր արժեքների շուրջ միավորումն է եղել մեր ազգային իղձերի իրականացման ուղին և է այսօր և լինելու է վաղը:

Այսօր մեզ մնում է ապրել և գործել դեպի Արցախ հավաքական վերադարձի հավատով ու սպասումով: Վերադարձի սպասումով է մեր ժողովուրդը մնում միասնական ու տոկուն՝ անկախ արտաքին հանգամանքներից: Այդ սպասումն է մղում մեզ բոլորիս՝ աղոթելու, որ գալիքն ավետաբեր լինի, և որ Քրիստոսով հաղթական վերադարձ ունենանք հայրենյաց երկիր: Եվ չպետք է մոռանալ, որ թշնամական գերության մեջ են գտնվում Արցախի պետական այրերը՝ անկախության խորհուրդն իրենց մեջ կրող անձերը, և որ այդ նույն սպասումով բոլորս պարտավոր ենք ջանալ նրանց ազատության և վերադարձի համար:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ 37 տարի անց ևս Արցախյան շարժման վեհ գաղափարները չդադարեն մեր գիտակցության մեջ, այլ շարունակեն լինել մեզ ուժ ու եռանդ տվող մղիչ ուժ, որպեսզի մենք՝ որպես սերունդ, արժանի լինենք կրկին փարվելու Արցախին, մեր հարազատ հողին ու ջրին, մեր սրբություններին ու հայրերի ավանդյալ արժեքներին:

Արցախի թեմ

ՈԳԵՂԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Վարդանանց շարժման կարևորությունը

Ինչո՞վ է Վարդանանց շարժումը կարևոր: Նախ մի մասնավոր դիտարկում կուզենայի անել. մենք չպետք է պատմական իրադարձությունները կտրենք տվյալ ժամանակաշրջանի համատեքստից: Եթե մենք մի որևէ իրադարձություն ենք մեկնաբանում, ապա պետք է հասկանանք, թե դրանից առաջ ու հետո ինչ իրավիճակ էր, և փորձենք պատմական իրադարձությունների միջև կապը, փոխազդեցությունները տեսնել: Ուստի երբ խոսում ենք Վարդանանց իրադարձությունների մասին, պետք է շատ կարևոր մի հանգամանք հաշվի առնենք.

Վարդանանց շարժումն անմիջական կապ ունի երկու առանցքային, շրջադարձային իրադարձությունների հետ, որոնք մեր ազգային պատմության սկիզբն են դնում հայ իրականության մեջ, հայ կյանքում: Դրանցից առաջինը վերաբերում է 301 թ. հայոց դարձին, երբ քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց իբրև պետական կրոն, և երկրորդը՝ 405 թ. գրերի գյուտին: Այս երկու իրադարձությունները՝ հայոց դարձը և ազգային գրի ստեղծումը, անմիջական, օրգանական կապ ունեն միմյանց հետ: Վարդանանց շարժումը, հետևաբար, պետք է այս իրադարձությունների լույսի ներքո մեկնաբանել, որոնցով մեր ազգային ինքնության, ազգային պատմության սկիզբն էր ազդարարվում: Հետևաբար՝ Վարդանանց շարժումով մեր հավատարմությունն էր հայտնվում այդ երկու կարևոր իրադարձություններին, այսինքն՝ Վարդանանց շարժումով վերահաստատվում էր շարունակականությունն այն գծի, որ սկզբնավորվել էր հայ իրականության մեջ: Այլ խոսքով՝ Վարդանանք գալիս էին ասելու, որ մենք մեր բռնած ընթացքից, որը մեր ինքնուրույնության, մեր անկախության, մեր պետականության մեկնակետն էր դարձել, չենք հրաժարվի, անկախ նրանից, թե արտաքին ճնշումներն ի՞նչ չափեր կընդունեն: Այս իմաստով՝ Վարդանանց շարժումով հայի լինելության, գոյության հարցն էր վճռվում: Ուստի Վարդանանց շարժումը չի կարելի իր պատմական համատեքստից կտրված մեկնաբանել, այլ պետք է միշտ նկատի ունենալ և՛ 301 թվականը, և՛ 405-ը: Եվ չպետք է պատահական համարել այն հանգամանքը, որ երբ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց, և առավել ևս երբ գրերի գյուտը տեղի ունեցավ, ազգային այբուբեն ու մշակույթ ստեղծվեց մեր սուրբ վարդապետների ջանքերով ու նախաձախնդրությամբ, Պարսկաստանն ավելի ուժեղացրեց կրոնական ճնշումը Հայաստանի նկատմամբ: Ու մենք հիշում ենք, որ անգամ Դ դարում Պարսկաստանը փորձ էր անում հայ պարսկամետ նախարարներին սիրաշահելու միջոցով մազդեզականությունը զորացնել Հայաստանում: Եվ ունենք դրա լավագույն վկայությունները Փավստոս Բուզանդի պատմության մեջ՝ ի դեմս Վահան Մամիկոնյանի և Մերուժան Արծրունու:

Ռաֆֆու «Սամվել» վեպը հենց այդ իրադարձությունների հիման վրա է շարադրվել: Սամվելը Վահան Մամիկոնյանի որդիներից մեկն էր, որը սպանեց և՛ հորը՝ Վահան Մամիկոնյանին, և՛ հոր կնոջը. ոչ թե իր սեփական մորը, այլ հոր կնոջը՝ Որմիզդուխտին, որը Պարսից Շապուհ արքայի քույրն էր: Այսինքն՝ եթե մեկը ծանոթ է Դ–ե դդ. Պարսից տերության՝ Հայաստանի հանդեպ քաղաքականությանը, ապա պիտի հասկանա, որ Պարսկաստանը երբեք չէր հրաժարվելու կրոնական գործոնի միջոցով իր ազդեցությունը Հայաստանի վրա մեծացնելու նկրտումներից: Եվ պատահական չէր բնավ, որ այդ քաղաքականությունն առավել զորանում էր, երբ Հայաստանը ներքին և արտաքին ազդեցությունների ներքո թուլանում էր, ինչպես որ եղավ հատկապես 428 թվականին՝ Հայաստանի բաժանումից հետո: Այս լույսի ներքո պետք է հասկանալ, թե ինչու Պարսկաստանի կողմից կրոնական ճնշումն առավել մեծ ծավալների հասավ, և պարտադրվեց կրոնափոխություն հատկապես գրերի գյուտից հետո, երբ ամենուր հայկական դպրոցներ բացվեցին, երբ նոր հունի մեջ մտավ քրիստոնեության պետականացմամբ սկզբնավորված ազգային ինքնության, ազգային պատմության կերտման շարժումը: Որովհետև արդեն ունեինք սեփական գիր, Հայաստանը լիարժեքորեն կարող էր այդ պատմական միջավայրում անկախ լինել և՛ կրոնական, և՛ մշակութային իմաստով, որ շատ կարևոր էր քաղաքական անկախություն ունենալու տեսանկյունից, չասելու համար, թե կենսական էր:

Եվ երբ հայկական կողմից դիմադրություն եղավ, ի՞նչ արեց Հազկերտը: Ընդդիմադիր նախարարներին ուղարկեց Կենտրոնական Ասիա՝ իրենց թշնամիների դեմ պատերազմելու, իսկ Հայաստանի ներսում ծանրացրեց հարկային լուծը: Այսինքն՝ գործադրվում էր ամեն միջոց, որ Հայաստանը հրաժարվի իր պետականակերտման ուղուց: Իսկ այդ պետականակերտման երկու կարևոր հիմնախարիսխներն էին ազգային եկեղեցին և Սահակմեսրոպյան շարժումը՝ լեզուն: Ինչո՞ւ ենք մենք ինքնության մասին խոսելիս շեշտում լեզվի կարևորությունը, որովհետև ինքնության կարևոր, առանցքային գործոններից մեկը սեփական լեզուն է:

Պարսիկները, երբ արդեն հասկացան, որ Հայաստանն այլևս լիարժեք անկախության ուղին է բռնել, ուզում էին ամեն գնով շեղել մեզ այդ ընթացքից: Հայկական դպրոցներն արդեն փակվում էին, որովհետև մեծ թվով մազդեզական քահանաներ էին ուղարկվել Հայաստան, որպեսզի Հազկերտի ծրագիրն իրագործեն. պատմիչների վկայությամբ՝ քանդվում-ավերվում էին նաև եկեղեցիներն ու սրբատեղիները: Տարբեր վայրերում բացվում էին տաճարներ, հիմնվում ատրուշաններ, որպեսզի մազդեզական կրոնն արմատավորվի: Ուրեմն պիտի հրաժարվեինք և՛ հավատից, և՛ լեզվից, հայ դպրոցից առհասարակ, մեր ազատությունից և վերջապես այն կարևոր գործոններից, որոնց վրա կառուցվում էր հայ պետականությունը՝ անկախ Հայաստանի տեսլականը: Պատկերացրեք՝ եթե նրանց հաջողվեր մեզ դավանափոխ անել, ի՞նչ պիտի լիներ այնուհետև: Վարդանանց շարժումը կանխեց այդ արհավիրքը:

Միշտ հակադրում են Վարդանին ու Վասակին. Վասակին համարում են մեծ դիվանագետ: Պատճառը, թե ինչու են այդ թեզը խորացնում ու հատկապես հասարակության տարբեր շերտերի մեջ աստիճանաբար այն մտածողությունը ձևավորում, թե Վարդանը բախտախնդիր էր, իսկ Վասակը՝ դիվանագետ, կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ այդ թեզը, չեմ խուսափի ասել, գուցե հովանավորվում է մեզ թշնամի պետությունների կողմից: Այդ թեզը ոմանք կարող են առաջ քաշել նաև ինքնատիպ լինելու կամ հակադրվելու մղումից (կան, չէ՞, մարդիկ, որ սիրում են հակադրվել): Այդ թեզը կարող է և առաջ քաշվել ոչ համակողմանի ուսումնասիրության արդյունքում: Ես գիտեմ նաև, որ որոշ պատմաբաններ, օրինակ՝ Ն. Ադոնցը, փորձել են անաչառ գնահատական տալ պատմական իրադարձություններին: Ուստի եկեք տեսնենք, թե ուր կտաներ Վասակի ճանապարհը, և ուր տարավ Վարդան Մամիկոնյանինը:

Նախ՝ Վասակին մեկնաբանելուց առաջ պետք է հաշվի առնել որոշ հանգամանքներ: Իմ բոլոր ասածները, ի դեպ, հիմնված են պատմական աղբյուրների վրա: Վասակը 11 տարեկանից մինչև 17-ը պարսից արքունիքում էր մեծացել՝ պարսկական միջավայրում: Ապա Վասակի անվան հետ է կապվում նրա հորեղբոր՝ Վաղինակ Սյունու սպանությունը: Եվ որոշ պատմաբաններ պատահական չեն համարում, որ միայն դրանից հետո Վասակը, որ 17 տարեկան էր, դարձավ Սյունյաց տանուտեր: Երրորդ՝ չմոռանանք, որ Սյունիքը սահմանակից էր Պարսկաստանին: Մենք գիտենք, որ և՛ Հռոմեական կայսրությանը, և՛ Պարսկաստանին սահմանակից հայկական նահանգները հռոմեական կամ պարսկական քաղաքական ազդեցություններից չէին խուսափում, մանավանդ երբ երկրում թուլանում էր կենտրոնական իշխանությունը:

Հաջորդ հանգամանքն այն է, որ երբ ուսումնասիրում ես Վասակ Սյունու կերպարը, տեսնում ես, որ այն հակասական է: Նա ունի և՛ բացասական, և՛ դրական կողմեր: Օրինակ՝ դրական կողմերից է այն, որ նա հայկական դպրոցներ բացելու հարցում համագործակցել է Մեսրոպ Մաշտոցի հետ՝ պատմական աղբյուրների իսկ վկայությամբ: Սակայն նույն անձնավորությունը Պարսկաստանի հետ հակամարտության ամենաթեժ պահին, երբ արդեն Վարդանանց կողմից ազատագրական պայքար էր սկսվել, ու այդ պայքարին, ի դեպ, ոչ միայն Հայաստանն էր միացել, այլև Վրաստանն ու Աղվանքը, պառակտում է առաջացնում հայկական բանակում, որը բաժանվում է երկու մասի՝ վասակյանների և վարդանանց: Կարծում եմ՝ յուրաքանչյուր պատմաբան հասկանում է, որ պայքարի ժամանակ ճամբարը պառակտելը չի խոսում մարդու պետականամետ մտածողության մասին: Եվ մեկ այլ կարևոր հանգամանք ևս, որ բավարար չափով նկատի չի առնվում և մեկնաբանվում Վասակի ուղեգիծը պաշտպանող պատմաբանների կողմից: Հակառակ այն բանի, որ Վասակը փորձեց ամեն կերպ խոչընդոտել Վարդանանց ազատագրական պայքարը, ամեն դեպքում նա ձերբակալվեց իր համախոհների հետ, տարվեց Տիզբոն և վերջում մահապատժի ենթարկվեց:

Տեսե՛ք՝ Վարդանի ուղեգիծն ինչ է ասում. որ պետք չէ վստահել պարսկական իշխանություններին, որովհետև նրանց նպատակն է Հայաստանի վերջնական միացումը Պարսկաստանին: Չպիտի մոռանանք, որ 451 թվականից առաջ տեղի էր ունեցել Հայաստանի բաժանումը. 428-ին Հայաստանը բաժանվեց երկու մասի՝ հռոմեական և պարսկական տերությունների միջև. Արևմտյան Հայաստանը շուտով հռոմեականացավ, պարսիկներն էլ ձգտում էին իրենց իշխանության ներքո գտնվող Արևելահայաստանը պարսկացնել, իսկ դրան հասնելու առաջին գործիքը զրադաշտականությունն էր, որը մեզ զրկելու էր և՛ մեր հավատքից, և՛ մեր գրից՝ ազգային գոյաբանության կարևորագույն գործոններից: Ի վերջո դա մեզ պարսկացնելու էր: Եվ մենք տեսնում ենք Վարդանանց պայքարի արդյունքը, որը պետք է գնահատել 484 թ. Նվարսակի պայմանագրով, երբ պարսիկները, իրոք, գնացին զիջման՝ հասկանալով, որ իրենք ծանր առաջադրանք են դրել իրենց առջև (նկատի ունեմ կրոնափոխությունը), որի համար թանկ գին պիտի վճարեն: Նաև նկատի ունենալով այն, որ հեփթաղների հետ պատերազմի մեջ են ներքաշված, պարսիկները հրաժարվեցին հայերին կրոնափոխ անելու մտքից:

Միևնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ Վահան Մամիկոնյանին (որի միջոցով կնքվեց Նվարսակի պայմանագիրը) հաջորդած ութ մարզպանների օրոք էլ Պարսկաստանը երբեք չհրաժարվեց հայ ժողովրդին կրոնափոխ անելու գաղափարից: Երբ բռնության տարբերակով չէր ստացվում դա, փորձում էին սիրաշահել կամ այնպիսի պայմաններ ստեղծել, որ հայերն ստիպված տեղի տան: Բայց Եկեղեցին, որ մեր պետականության կարևոր հիմնասյուներից մեկն է, արդեն ավելի ամրացած վիճակում էր, ունեինք ազգային դպրոցներ, ազգային ինքնությունը բավականին բարձր մակարդակում էր: Տեսեք՝ ո՞ւր հասցրին մեզ Վարդանանք. Վարդանանք հասցրին նրան, որ Պարսկաստանն արդեն հրաժարվեց Հայաստանը դավանափոխ անելու, հայությանը պարսկացնելու իր ծրագրից:

Իսկ Վասակի տարբերակն ո՞ւր էր տանելու: Ընդունենք, թե մենք դավանափոխ էինք լինելու: Իսկ հետո ի՞նչ էր լինելու: Մենք տեսնում ենք արաբական արշավանքի հետևանքները Պարսկաստանում. Պարսկաստանն իսլամացավ, և գիտնականներն են փաստում, որ երբ Պարսկաստանն իսլամացավ, մի հսկայական մշակույթ ոչնչացվեց: Եթե մենք հաշտվեինք պարսկական ծրագրի՝ Պարսկաստանի քաղաքական ուղեգծի հետ, հաջորդիվ պիտի հաշտվեինք արաբական լծի հետ: Եվ մենք տեսնում ենք, որ ինքնության ու պետականության համար պայքարը, հակառակ դժվարություններին, պսակվել է հաղթանակով, երբ մենք չենք հանձնվել: Եվ մենք այսօր կանք...

Գրիգոր Խանջյան, «Վարդանանք» գորգանկարը, 1983 թ: Ստեղծվել է Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվերով:

Տ. Գևորգ եպս. ՍԱՐՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՎԱՄՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

Սուրբ Ղևոնդյանք՝ Ավարայրի ոգի

Քահանայք պատուեալք օծմամբ Սուրբ Հոգւոյն. նախակարգեալք յառաջնորդութիւն փափագողաց վերնոյ յարկին եւ անպատում պատրաստեալ բարեացն. այսօր փութացան ելանել ի նոյն
(Շարակնոց):

451 թվականի մայիսի 26-ը հայոց աշխարհի պատմական վճռորոշ օրերից մեկն է. Ավարայրի դաշտում այդ օրը հայ ժողովուրդը կենաց ու մահու պայքարով լուծեց իրեն պարտադրված գոյաբանական խնդիրը:

Պարսից Հազկերտ Երկրորդը, ցանկանալով իր տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդներին մեկընդմիշտ կտրել Բյուզանդական կայսրությունից, որոշում է զրադաշտականություն հաստատել նրանց շրջանում՝ կրոնական առումով անջրպետ ստեղծելով կայսրության հնարավոր քաղաքական և ռազմական միջամտությունների դեմ: Իր այս քաղաքականությունն իրագործելու ճանապարհին Հազկերտը ամենամեծ արգելքը համարում էր Հայաստանը, և 447 թ. աշխարհագիր անցկացնելու պատրվակով նա Հայաստան է ուղարկում Դենշապուհին՝ հանձնարարելով հող նախապատրաստել կրոնափոխության համար: Պաշտոններից հեռացվում են հազարապետ Վահան Ամատունին, գլխավոր դատավարությունն իրականացնող կաթողիկոսը. նրանց տեղում համապատասխանաբար պարսիկ պաշտոնյա և մոգպետ են նշանակում:

Հալածանքներ են սկսվում նաև քրիստոնյաներից կազմված կայազորային զորամասերում: Հավատը չուրանալու համար շատ զինվորներ և ավագներ ենթարկվում են տանջանքների և բանտարկվում: Հալածանքների միջոցով հաջողության չհասնելով՝ Հազկերտը 449 թ. հրովարտակ է ուղարկում Հայաստան, Վրաստան և Աղվանք՝ հրամայելով հրաժարվել քրիստոնեական հավատից և ընդունել զրադաշտականություն: Սրան անմիջապես հաջորդում է մերժողական պատասխանը, որից զայրացած՝ Հազկերտ Երկրորդ շահը պահանջում է, որ հայ նախարարները ներկայանան Տիզբոն: Հայ նախարարները, կեղծ ուրացության դիմելով, հնարավորություն են ստեղծում վերադառնալու հայրենիք և նախապատրաստելու ապստամբության հզոր ալիք՝ ընդդեմ Պարսից տերության:

Ս. Ղևոնդ Երեց

Ս. Հովսեփ Ա Հողոցմեցի

Սուրբ Հովսեփ Առաջին Հողոցմեցի Հայրապետը և հոգևորականաց դասը դիմում են ժողովրդին՝ կոչ անելով դիմակայել հավատափոխությանը, հավատարիմ մնալ Քրիստոսին և ոչ մի գնով չհրաժարվել ինքնության մաս կազմող քրիստոնեությունից: Նրանց հաջողվում է այդ գաղափարի շուրջ համախմբել ժողովրդին և առաջնորդել սրբազան պայքարի:

Առաջին դիմակայությունը Ղևոնդ երեց Վանանդեցու գլխավորությամբ տեղի է ունենում Ծաղկոտն գավառի Անգղ ավանում, որտեղ ժողովուրդը, չհանդուրժելով սրբապղծությունը, այլևս համբերությունը կորցրած, հարձակվում է եկեղեցին կրակարանի վերածող պարսից մոգերի վրա և կրակարանն ավերում. «....Դագանակները ձեռքերն առած՝ մոգերի ու մոգպետի գլուխները ջարդեցին, բոլորին փախցրին իրենց կացարանները, իսկ իրենք պաշտամունքը վերսկսելով եկեղեցում՝ կիրակնօրյա կարգն էին կատարում» (Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1958, էջ 56):

Վճռական ճակատամարտի օրը՝ մայիսի 26-ին, և դրանից հետո՝ պայքարի ողջ ընթացքում, հոգևորականները եղան հայոց զորքի և ժողովրդի կողքին: Խաչն ու զենքը համատեղած՝ նրանք մարտնչում ու ոգեշնչում էին զորքին և աշխարհազորին՝ արիաբար կռվելու՝ առանց մահվան վախի:

Նախքան ճակատամարտը նրանք պատարագ մատուցեցին և Տիրոջ կենարար Մարմին ու Արյունը բաշխեցին ողջ զորքին: Սրտառուչ և ոգեկորով էր Սուրբ Ղևոնդ Երեցի խոսքը. «Դուք բոլորդ գիտեք, որ առաջվա ժամանակները, երբ դուք պատերազմ էիք գնում, թեպետև սովորություն ունեիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ ձեզ հանձնելով նրանց աղոթքին՝ որևէ ամուր տեղ էիք թողնում նրանց, իսկ այսօր եպիսկոպոսները և երեցներն ու սարկավագները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամեն մեկը սահմանված կանոնով իբրև սպառազինված և պատերազմի պատրաստված՝ կամենում է ձեզ հետ միասին հարձակվել ու ջարդել ճշմարտության թշնամիներին: Եվ եթե նույնիսկ մեռնեն էլ նրանց ձեռքով, այդ բանից էլ չեն վախենալու, որովհետև ավելի սիրով մեռնել են ուզում» (Եղիշե, էջ 103):

Պատերազմից հետո ձերբակալվեցին ապստամբության մեջ ղեկավար ճանաչված նախարարներն ու հոգևորականները: Հոգևորականների թվում էին Սուրբ Հովսեփ Հողոցմեցին և Սուրբ Ղևոնդ Երեցը: 452 թ. պարսից արքունիքը դատ է սկսում ձերբակալված իշխանների ու հոգևորականների դեմ: Երեսունյոթ նախարար, Հովսեփ Կաթողիկոսը, Ղևոնդ Երեցը, Սահակ եպիսկոպոսը, Մուշե, Արշեն և Սամվել երեցները, Աբրահամ, Քաջաջ սարկավագներն աքսորվում են սկզբում Վրկան, այնուհետև Ապար աշխարհ՝ Խորասանի Նյուշապուհ քաղաք, որտեղ պահվում են կապանքների մեջ: Պարսից արքունիքը, նրանց շարունակ ամեն տեսակի չարչարանքների ենթարկելով, փորձում էր հավատուրացության մղել, բայց ապարդյուն: Ի վերջո, 454 թ. Հազկերտ Բ-ի հրամանով հոգևորականները մատնվեցին տանջալից նահատակության:

Նյուշապուհ բերդում անասելի չարչարանքների ու կտտանքների մեջ անգամ հոգևորականները չուրացան հայրենի հավատը՝ Քրիստոսին, դրսևորեցին հերոսական, անհողդողդ կամք ու վճռականություն: Երբ դահիճը մոտենում է՝ նրանց սպանելու, Ղևոնդ Երեցը Հովսեփ Կաթողիկոսին խնդրում է առաջինը մոտենալ սրին, որովհետև նա է բոլորից աստիճանով բարձր. «Մոտեցիր, առաջ գնա սրի դեմ, որովհետև աստիճանով դու բոլորից բարձր ես» (Եղիշե, էջ 159):

Սուրբ Եղիշե պատմիչը հոգևորականաց դասի մասնակցությունը Վարդանանց պատերազմին ներայացնում է հետևյալ կերպ. «Նրանք էլ ամենևին չվախեցան պատերազմի գնալ նրանց հետ, քանի որ ոչ թե մարմնական էին համարում այդ կռիվը, այլ հոգևոր առաքինության կռիվ. ցանկանում էին իրենք էլ քաջ զինվորներին մահակից լինել» (Եղիշե, էջ 92):

Ղևոնդյանք Վարդանանց հետ միասին դարձել են մեր ազգային դիմադրողականության ոգին: Ղևոնդ Երեցը սերունդների կողմից արժանացել է «Ավարայրի արծիվ» պատվանունին: Այսօր էլ հայ հոգևորականը նրանց օրինակով կանգնած է հայոց բանակի կողքին՝ խաղաղության թե պատերազմի ժամանակ, թիկունքում թե առաջնագծում:

Ղևոնդյանց քահանաների տոնը Հայոց Եկեղեցում կատարվում է Բուն բարեկենդանի նախորդ երեքշաբթի օրը: Տոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են գալիս թեմերում սպասավորող հոգևորականները՝ մասնակցելու Միածնաէջ տաճարում մատուցվող սուրբ և անմահ պատարագին: Պատարագից հետո ավանդաբար տեղի է ունենում քահանաների հավաք, կատարվում է շնորհաբաշխություն: Ի գնահատություն Հայոց Եկեղեցու անդաստանում երկարամյա վաստակի՝ քահանաներին շնորհվում է ավագ քահանայության, ծաղկյա փիլոն և լանջախաչ կրելու իրավունք:

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վարք հայրենասիրության

«Հայրենասիրությունը բանաձևելու կարիք չունի. նրանով պիտի ապրես, գործես, արարես»:
Գարեգին Բ
Ամենայն Հայոց Կաթողիկոս

Վարդանանք ոչ թե ձևակերպեցին հայրենասիրությունը, այլ կրողը եղան նրա՝ խորհրդանիշ դառնալով հայրենանվիրումի: Վարդանանց անունը դարեր ի վեր հնչել է որպես քաջության և ազգանվիրումի բարձրագույն հոմանիշ՝ հայ մարդու մեջ արթնացնելով որդիական ջերմեռանդ զգացմունք առ հայրենին: Ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ, սրտառուչ և անձնուրաց հայրենասիրությամբ, աննկուն կամքով ու հերոսությամբ՝ Ավարայրի հերոսամարտը դարեր շարունակ ոգեպնդել է մեզ, մղել ուխտելու՝ անդրուժ մնալ Վարդանանց ոգուն և գաղափարին: Անձնուրաց հայրենասիրության և աներեր հավատի այս ավանդությունը պատմական բախտորոշ մի ժամանակաշրջանի մասին է, երբ հայ ժողովրդի առաջ ձուլման վտանգն էր ծառացած, և պետք էր վճռական ընտրություն կատարել ինքնության կորստի և կենաց ու մահվան պատերազմի միջև: Դա և՛ հոգևոր, և՛ հայրենյաց պատերազմ էր միաժամանակ:

Արշակունյաց արքայատոհմի անկումից հետո թագավորական կենտրոնացված իշխանություն չկար, և համախմբման կարևոր գործոն էր Հայոց Եկեղեցին: Պարսից արքունիքը փորձեց տկարացնել և ձուլել հայ ժողովրդին դավանափոխությամբ՝ այդպես հասնելով իր իշխանության բացարձակ հաստատման: Հարկերի ճնշման ծանրությանը հաջորդեց հավատափոխության պահանջը, որին ի պատասխան, վկայակոչելով Պողոս առաքյալի խոսքերը, հայոց կողմից ազդարարվեց. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված»: Հայ ժողովուրդը որոշեց կռվել և լինել. լինել՝ հավատարիմ մնալով իր դավանանքին և ինքնությանը: Զինվորական թե հոգևորական իրենց անձնվեր վարքով ու ամուր հավատքով վաստակեցին այդ իրավունքը:

Ավարայրում կռվող հիմնական և առաջնորդ ուժը հայ ժողովուրդն էր, որն իր կամքը թելադրեց ուխտապահ իշխաններին և հոգևորականությանը: Վարդանն ինքը հավաքական կերպար է, հայ ժողովուրդն է, որ ստանձնեց հայրենի երկրի բախտը և հարևան վրաց ու աղվանից ժողովուրդների հետ «կամաւ և յօժարութեամբ» դաշն կապած՝ իջավ Ավարայր՝ զենքը ձեռքին կռվելու այն բարձր գիտակցությամբ, որ անփառունակ կյանքից փառավոր է հերոսական մահը, և լավ է մեռնել կանգնած, սուրը ձեռքին, ռազմի դաշտում, քան սողալ թշնամու ոտքերի տակ: Հայ հոգևորականությունը ևս չվարանեց պատերազմի դուրս գալ, քանի որ, Եղիշեի վկայմամբ, մարմնական չհամարեց այդ կռիվը, այլ հոգևոր առաքինության, և ցանկացավ մահակից լինել քաջ զինվորին: Եվ այդ հոգևորականները՝ Սուրբ Ղևոնդյանք հավաքական անունով, իրենց փառավորեցին սրբի լուսապսակով, որոնց հիշատակը Հայոց Եկեղեցում տոնախմբեցինք այս երեքշաբթի՝ փետրվարի 25-ին:

Վարդանանց օրինակն ապացույցն է այն անվիճարկելի ճշմարտության, որ, ինչպես Գարեգին Ա Հայրապետն է ասում. «Քրիստոնեական հավատքը հոգեկան արիության աղբյուր է և ոչ թե խուսափումի ճանապարհ»: «Վախը թերահավատության նշան է,— ճակատամարտից առաջ իր զորքին պատգամում էր Վարդան Մամիկոնյանը,— թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից, նրա հետ վախն էլ թող փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»: Սպարապետը տատանումներ չուներ, որովհետև արդարացի էր իր պայքարը, հայրենի հողի վրա իր ժողովրդի ապրելու իրավունքն էր պաշտպանում, և նվաճեց այդ իրավունքը՝ զոհասեղանին դնելով ողջ ունեցածը:

Չխորանալով պատմական փաստերի քննության մեջ՝ նկատենք, որ պարսից կողմը հաշվի էր առել հայոց զորքի փոքր թվաքանակը, բայց հաշվի չէր առել ոգեկան այն հզոր ուժը, որ հայ մարդուն առաջնորդեց ռազմադաշտ՝ իր հայրենիքը, հավատքը, ազգային տեսակը պաշտպանելու: Եվ հենց այդ ոգին պետք է վերարթնանա մեր մեջ այսօր, երբ մեր հայրենիքը վերքեր ունի, և մենք պետք է դրսևորենք մեզ իբրև հոգատար զավակ, որ չի լքում կարեվեր ծնողին, այլ բուժում և զորացնում է նրան: Մեր կապը նախնիների հետ վերանորոգելու, նրանց նվիրումի օրինակով քաջալերվելու պահ է նաև այսօր:

Այո՛, Ավարայրը դեռ չի ավարտվել. այսօր էլ շարունակում ենք գոյության պայքարը՝ արյամբ սրբացված մեր հողն ու մեր ազգային ինքնությունը պահելու համար: Ուստի Վարդանանց օրինակով զորացած՝ մուտք գործենք Մեծ պահքի շրջան և չերկնչենք, այլ Տիրոջ օգնականությանն ապավինելով՝ ընթանանք առաջ այն հաստատ համոզմունքով, որ արդար է մեր պայքարը, և անբեկանելի՝ մեր հավատքը: Վերագտնենք հոգեկան կապը մեր քաջ նախնիների հետ, զգանք հայրենի հողի ուժը և ստանձնենք քաղցր պարտավորությունը նրա պաշտպանության և զորացման:



Հովհաննես Այվազովսկի, Երդում Ավարայրի ճակատամարտից առաջ. Վարդան Մամիկոնյանը և իր որդին, 1892 թ.

Տ. Հարություն քհն. ՀԱԿՈԲՅԱՆ

Անդրանիկ Զորավար — 160

(նամականի)

Հովհաննես Թումանյանը Անդրանիկին
1917, դեկտեմբեր 23, Թիֆլիս

Սիրելի Անդրանիկ, ահավոր մոմենտի առջև ամեն մարդ պետք է ընդհանուրի սեղանին բերի ինչ որ ունի և կարող է՝ թե՛ վերահաս վտանգը կանխելու և թե՛ բաղձալի խաղաղությանը հասնելու համար:

Ես չորս տղա ունեմ, չորսն էլ երկրի կառավարության, Ազգային խորհրդի և քո տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկներս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ կլինեն:

Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետևաբար ոչինչ չեմ խնայել, միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների և ազատասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունը: Մնամ անսասան հավատարիմ քո՝ շատ փոթորիկների մեջ ձեռք բերած փորձառությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը, այլև բնական մարդասիրությանը ու զինվորական բարձր տաղանդին և պատրաստ գալու, երբ որ կկոչի քո եղբայրական ձայնը. համբուրում եմ հերոսական ճակատդ:

Միշտ քո Հովհ. Թումանյան

Հ. Գ. Սրա հետ միասին, որովհետև ես էն կարծիքին եմ, որ ամեն մի հայ այժմ պետք է իրեն դնի կամավոր տուրքի տակ, պարտավորվում եմ ամսական հարյուր ռուբլի տալ էս նպատակով մեր ընդհանուր գանձարանին:

Անդրանիկը Հովհ. Թումանյանին
Բաց նամակ
Բանաստեղծ Հովհ. Թումանյանին

Սիրելի Հովհաննես

Ես հրճվանքով կարդացի նամակդ: Հասած է ժամը, որ բոլորը նմանեն քեզի՝ տրամադրելի ընելով իրենց զավակները և դրամը հայրենիքի պաշտպանության գործին: Պետք է մոռանանք պահ մը գրիչը՝ փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մեջ միայն կծաղկի գեղարվեստի կյանքը:

Ես շատ զգացված եմ քո բարձր տրամադրութենեդ և կհուսամ, որ մեր բովանդակ մտավորականությունը կհետևի քու օրինակին, և այսպիսով կդարբնենք մեր սրբազան ազատությունը:

Քոյդ՝ Անդրանիկ

Անդրանիկը Հովհ. Թումանյանին
1918, 22/4 նոյեմբեր, Գորիս

Հարգո սիրելի պ. Հովհաննես Թումանյան

Ճանապարհների և հաղորդակցության խափանման հետևանքով մոտ յոթը ամսվա ակամա կղզիացումե վերջ այսօր քիչ շատ հնարավորություն կունենամ գրելու Ձեզ և հայտնելու այն ամենը, ինչ որ կատարվեցավ իմ շուրջը այդ ժամանակամիջոցի ընթացքին:

Կռվի ժամանակ միշտ հառաջապահ դիրքերու մեջ, իսկ քաշվելու ժամանակ ամենեն վերջը, գաղթականությունը միշտ առաջ ձգած, Հայկ<ական> առանձին հարվածող զորամասս իր դերը կատարեց անշուշտ իր կազմութենեն 10 ապր<իլի> մինչև Դիլիջանի շուրջը տեղի ունեցած պատմական ընդհարումներու միջոցին: Հունիսի սկզբներուն Ն. Տ. զորամասը կգտնվեր Դիլիջան՝ իբր սահմանապահ զորամաս, երբ սպիտակ դրոշակով թուրք պատգամավորություն մը հայտնեց, թե հաշտությունը արդեն կնքված է Բաթումի մեջ թուրք կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև:

Հաստատապես վերահաս լինելով հաղթության դաշնագրի բոլոր այն նվաստացուցիչ և ոևէ հեղափոխական հայու համար անհանդուրժելի պայմաններուն, որով հայությունը կհամաձայներ թաղել իր դարերու երազը, ընդունել չափազանց նեղ և ամենաանպետք երկրամասի մը Հայաստան կոչվիլը, թույլ կուտար թշնամի ուժերուն ամեն կերպ օգտվիլ բոլոր տեսակի փոխադրական միջոցներե և ճանապարհներե: Այն ատեն ինձ անհնար թվաց, որ կարենամ իմ զորամասով մնալ ոևէ դիրքի վրա և թույլ տալ, որ թշնամի ուժը անցնի՝ գնալ կռվելու համար դաշնակից, ազգակից ուժի մը դեմ: Այդ պարագան ինձ համար ավելի քան անհանդուրժելի էր: Հետևապես անմիջապես տեղեկացուցի կորպուսի հրամանատարության, որպեսզի ուրիշ ուժեր գան և փոխարինեն իմ զորամասը:

Այդ պահանջես վերջ նկատի ունենալով այն լճացած, ստրկացած մթնոլորտը, բոլոր այն երևակայելի դժբախտությունները, որոնք կսպառնային Հայկ<ական> Հանրապետության և հայ ժողովուրդին, վճռեցի անցնել Պարսկաստանով և միանալ դաշնակից անգլ<իական> բանակին, որու շնորհիվ միայն կհուսայի փրկել թրքահայության վերջին բեկորները: Իմ այս որոշումս հաղորդեցի մասնավոր պատգամավորներու միջոցով Վեհ<ափառ> կաթողիկոսին, Հայաստանի Ապահովության Խորհրդի Երևանի Մարմնին, տաճկահայ զորամասերուն և առհասարակ թուրքահայ ժողովրդին:

Իմ ցանկությունս էր, որ թուրքահայ զինված մասը դուրս գա այդ սահմաններեն: Իսկ գաղթականությունը տեղավորվի Հայաստանի սահմաններու մեջ համեմատաբար ապահով շրջանները՝ Նոր Բայազետ, Ախտա և Դարալագյազ:

Դժբախտաբար, տաճկահայ զորամասերը զանազան պատճառներով հարկավոր փութկոտությամբ չմիացան զորամասիս, և միայն փոքր խմբակներ աճապարեցին գալ ինձ մոտ, այն էլ՝ ուշ:

Մյուս կողմանե ալ, դժբախտաբար, գաղթականությունը ամբողջ ճանապարհին, հակառակ իմ հորդորներուս, չթողեց զորամասը և ամեն տեղ հետևելով անոր, նույնիսկ առաջ անցավ և իր անկարգություններով, սանձարձակություններով մեծագույն հարվածը տվավ զորամասի թե ռազմական, թե պարենավորման գործին և թե առհասարակ անոր հմայքին:

Զորամասը գնալով ստվարացավ, և Նոր Բայազետեն մեկնելուս անոր թիվը հասավ մոտ 3500՝ 2 թնդանոթով և 6 փուլեմյոթով: Հունիս 12-ին մեկնեցա Նոր Բայազետեն դեպի Ղարաբաղ, ուսկից Քարագլուխ, Քեշիշքենդ, Հախլու, Աչատեն, Սիս, Սուլթանբեկ, Սալասուչ, Խալխալի միջով անցա Նախիջևան:

Հունիսի 20-ին հասնելով Նախիջևան՝ մի քանի տեղով քանդել տվի երկաթուղու գիծը, թունելները՝ խափանելու համար Շահթախթի կողմեն ոևէ փորձ կռնակս անցնելու: Երկու օր հետո հանկարծակիի բերելով և մանյովրով մը Ջուլֆայի մեջ (որպես թե գաղթականությունը անցնելու համար հայ և թուրք պատգամավորության ներկայացուցիչ) անցա Արազի կամուրջը՝ գերի վերցնելով թուրքական 20–25 ասկյարներ՝ 2 օֆիցերով:

Պարսկաստանի մեջ գտնված դաշնակից ուժերու մասին ոչ մի ստույգ տվյալ չունենալով՝ վճռեցի անցնել Խոյի վրայով Սալմաստ, ուր կար ասորական 2 պաթալյոն և 4 գունդ, Վանի զինված հայկական ուժը, որոնց հետ միանալով կհուսայի առաջ բերել ակտիվ գործունեության համար բավարար ուժ: Հետևաբար, ավելի հարմար նկատեցի գնալ Խոյի ուղղությամբ: Երկու օր հետո Սեյիտավարե 16 վերստ այս կողմ՝ Էվակնու թուրք գյուղի քովի բարձունքին վրա, ունեցա առաջին ընդհարումը թուրքական կանոնավոր պաթալյոնի հետ: Այդ օրը միայն ձիավորներովս ջախջախիչ հաղթություն տարի այդ ուժի դեմ, և գրավեցինք 2 թնդանոթ և 3 փուլեմյոթ: Նույն օրը գիշերով մտնելով Սեյիտավար, գտանք միայն 12 տեղացի հայեր, որոնք հայտնեցին, թե Սեյիտավարը կոտորված է արդեն նախապես, և որ ասորիները՝ թուրքական ուժերու ճնշման տակ քաշվեր են Ուրմիա, և Սալմաստը ամբողջովին գաղթած է: Այս պարագան վճռական ազդեցություն ունեցավ զորամասի գործունեության համար: Ինը օր առաջ այդ շրջանը եկած էր մեկ դիվիզիա տաճկական զորք, այնպես որ դրությունը լրջացած էր:

Հաջորդ օրը՝ հունիս 24-ին (ն. տ.), Խոյի առաջ տեղի ունեցավ մեծագույն ճակատամարտը: Առավոտուն թշնամի ուժերը սակավ էին, և մեզ հաջողվեց մտնել քաղաքի մի մասը, բայց կեսօրե վերջ թշնամին օգնական ուժ և հրետանի հասնելով, վերոհիշյալ տվյալներուն վրա հնարավորություն չտեսա ավելի հառաջանալու, և զորամասը նահանջեց ետ՝ տալով մոտ 70 սպանված և մոտավորապես նույնքան ալ անհայտ: Այս անհաջողության մեջ իր բաժինն ունեցավ նաև ձիավոր հրամանատարներեն մեկուն գործած սխալը, որով հնարավորություն տվավ թուրք ձիավորներուն անցնել մեր թիկունքը, և գաղթականության առաջ բերած փանիքան:

Աճապարելով վերադառնալ Ջուլֆա, այնտեղ հավաքեցի զորամասը և ուզեցի անցնել Ղարաբաղ: Ճանապարհին, սակայն, թուրքական Յայջի գյուղը ընդդիմություն ցույց տվավ՝ պահանջելով մեզմե 10 000 ռ. վճարք: Մի ժամվա ընթացքին գյուղը մաքրվեցավ, և ձեռք ձգեցինք 2 թնդանոթ: Անցանք Ազան և Դեր գյուղերը: Այստեղ զորամասը ունեցավ իր ամենեն դաժան օրերը: Հոգնածության, սնունդի բացակայության, Խոյի ճանապարհին խմած կեղտոտ ջուրերու և տաքի հետևանքով հառաջ եկավ համաճարակ: Բժշկ<ական> միջոցները անբավարար, և ահա հառաջ եկավ զորամասի մեջ թուլացում և լքում: Ուտելիքը զորքը իր ձեռքով կհայթայթեր արտեր քաղելով և աղալով: Մոտավորպես 200 զինվոր մեռան հիվանդութենե: Մեկ մասը, մոտ 400 հոգի, լքեց բանակն ու անցավ Ղարաբաղ:

Կուզենայի բանակը մի քանի օրով հանգստացնել այդ շրջանը և ապա կազդուրվելե վերջ անցնել Ղարաբաղ: Այդ միջոցին Նախիջևանը անհանգիստ էր. թուրքերը թռուցիկներով հայտարարած էին, թե 3 օրեն կը մտնեն Նախիջևան: Հաղորդագրություն կար, թե բոլշևիկները եկած էին Մուսալու, թե անգլիացիք Թավրիզ են, որ Թուրքիո մեջ հեղափոխություն է: Տեղական հայությունը մտահոգ էր իր դրության մասին, և ահա շրջանի լիազոր Աշոտ Մելիք-Մուսայանցը և պարուչիկ Խարազյանը դիմելով ցանկություն հայտնեցին, որ զորամասը անցնի Նախիջևանի շրջանը, որ տեղական ուժերն ալ դրվեն իմ տրամադրության տակ, որ ես դիկտատոր լինեմ, և շրջանը հայտարարվի Ռուսաստանի անբաժան մաս, որ ստեղծվի կառավարություն՝ 7 փորթվելներով, և խոստացան հանել տեղական 6000 զինված ուժ: Այս առթիվ հրատարակված փաստաթղթերեն դուրս ինձ մոտ կմնան փաստաթղթեր, որոնց հրատարակումը կմնա ապագային:

Զորամասով միասին անցնելով Ապրակունիս՝ ձեռնարկեցի կազմակերպման և ազգաբնակության զինաթափման գործին: Այդտեղ երևան եկան տեղական կազմակերպության անօգտակարությունն ու անկերպարան վիճակը և ազգաբնակության անբարյացակամությունը: Ոչ զինվորներու մոպիլիզացիան, ոչ զորամասի պարենավորումը, ոչ ձիերի ուտեստը և ոչ ալ զինվորներու այլ (շորեղեն, կոշիկ) կարիքները ամենափոքր չափով չկատարվեցան և չբավարարվեցան: Մյուս կողմանե դեպքերը գահավիժեցին, և մինչ զբաղված էինք շրջանի զինաթափման գործով, Նախիջևանի վրա արշավեցին Շահթախտեն և միաժամանակ Ջուլֆայի ուղղությամբ տաճկական ուժեր՝ 2 պոլկ: Լիազորներու ժողովեն մինչև կռիվը տևեց 6 օր: Սիսիան մնաց նաև Սասնի պոլկի 300 ձիավորները, որոնք սակայն Յապոնի հրավերի վրա շուտով մեկնեցան Դարալագյազ: Տեղական ուժերը՝ անկազմակերպ և շատ սակավ, իսկ առանձին զորամասը՝ անբավարար և ուշացած: Հետևաբար Նախիջևանը թողնվեցավ, և զորամասը ուժասպառ, հյուծված, Կզնուտի և Ղազանճիի թևերով քաշվեցավ Բիստ: Այնտեղեն զորամասը Նազրվանով Օխճիի ձորով անցավ Ղափան՝ Կաթարսկի գավոտ: Պարենավորման դժվարությունը ստիպեց ինձ անցնել Գորիս, ուր կհուսայի գտնել տեղական օժանդակություն: Սակայն հուսացած ջերմ օժանդակությունը չգտնելով և մյուս կողմանե ոչ մի միջոց չունենալով՝ զինվորներու կարիքները բավարարելու, հայտարարեցի զինվորներուն, որ ամեն ոք ազատ է՝ ուզողը կմնա, ուզողը կրնա հեռանալ: Այս կերպով զորամասի մի մասը հեռացավ և գնաց դեպի Երևան: Ես ևս, ուզելով անցնել Սիսիան, ճանապարհին ստիպվեցա գտնվել Զանգեզուրի Կեդր<ոնական> Ազգ<ային> խորհրդի և Շուշինսկի պոլկի ներկայացուցչի հրավերով Աղուտի-Վաղուտի թուրքական գյուղերը, որոնք ճանապարհը փակած էին և սպանած բազմաթիվ անցորդներ: Անցնելով Սիսիան՝ զինակիցներես գլխավորները (Արտուշկան, Սմբատ) իրենց խմբապետներով և զորքով աճապարեցին անցնել Հայկ<ական> Հանրապետության սահմանները, թեև իրենց առաջարկեցի մի ժամանակ ևս մնալ, բայց չլսեցին, իսկ ես որոշած էի չմտնել այդ սահմանները, այլ անցնել ուրիշ ուղղությամբ: Իսկ Ճիպեճին և Պոնապարթը 75 ձիավորներով գնացին՝ ցանկանալով անցնել Ղարաբաղով Թավրիզ, բայց մնացին Մեղրի, ուր են այժմ:

Սեպտ<եմբերի> 4-ին Սիսիանի մեջ տեղի ունեցավ ժողովրդ<ական> գյուղական ներկայացուցիչներու ընդհանուր ժողով, որոնք միաձայն խնդրեցին ինձ զորամասի հետ մնալ Սիսիան՝ թե տեղի պաշտպանության և թե ինքնապաշտպանության գործի կազմակերպման համար: Մի քանի օր իմ զորամասի կազմակերպումով զբաղելե վերջ, ունեցա մոտ 1200 զինվոր, որմե 3 րոտա, 540 հոգի ոտավոր, 5 սոտնի, 400 ձիավոր, <անընթ.> փուլիմյոթի կամանտա, 110 ապոզ և բժշկական սանիտարներ և այլն: Ապա ձեռնարկեցի Սիսիանի զինվորական ուժի կազմակերպման և հայտարարեցի մոպիլիզացիա 20–30 տարեկաններու, որու հետևանքով մեջտեղ եկավ երեք րոտա, որոնք դասավորվեցան հետևյալ տեղերը. I րոտա՝ Գյումրի <անընթ>, II՝ Բազարչա-Ղալաճղ, III՝ Բնունիս-Թազագյուղ-Ալելու: Սեպտ<եմբերի> 10-ին ռազմական տեսակետով Սիսիանը ապահովեցնելու համար Ղազանճիի ուղղությամբ գալիք զորքերու դիմաց, դարձյալ Սիսիանի ժողովրդական ներկայացուցիչներու որոշմամբ, քանդեցինք ու ավերեցինք Ճոմարթլու, Օրթագեղ և մասամբ Արասիս թուրքական գյուղերը: Այս հրահանգով ամբողջ Սիսիանը վերածվեցավ հայկական շրջանի:

Այդ օրերուն տեղի ունեցած է Գորիսի շրջանի մեջ Զապուղի ձախող գործողությունը: Շուշինսկի և Գանձակի զորամասերը, թվով 300 հոգի, իրենց պահեստներով ուզած էին անցնել Շուշի, որ ինքնզինքին անկախ հայտարարելե վերջ, ակնդետ կսպասեր ռազմամթերքի՝ Շուշի հասնելուն, և համաձայն տրված հրահանգի՝ հարկավոր քանակությամբ սայլեր և զինվորներ ղրկված էին արդեն Զապուղի և Հաքարլուի մյուս կողմը գտնված Ղարաղշլաղ գյուղը, որու ժողովուրդը հայտնի է իբր լավ կռվողներ: ➥ էջ 8

Հայ պատմանակարչության նախակարապետը, բազմատաղանդ ու բազմանվեր այրը

Վարդգես Սուրենյանց — 165

Հայ և համաշխարհային արվեստի անմահանուն դեմքերից մեկը՝ նկարիչ, արվեստի տեսաբան, թարգմանիչ, Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Վարդգես Սուրենյանցը, ծնվել է 1860 թ. փետրվարի 27-ին Ախալցխայում՝ քահանա, կրոնի պատմության ուսուցիչ Հակոբ Սուրենյանցի ընտանիքում: Կերպարվեստի հրաշալի աշխարհ է մուտք գործել նախ՝ Լազարյան ճեմարանում, ապա՝ Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանի ճարտարապետության բաժնում, Մյունխենի գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետության և գեղանկարչության բաժիններում գեղեցիկն ստեղծելու գաղտնիքներին տիրանալով ու հոգեմտավոր գործունեությանն անհրաժեշտ իմացական պատվանդան ստեղծելով:

Նկարչական կարողություններն ի հայտ են եկել դեռ ճեմարանական տարիներին. «Մեր գծագրության և նկարչության ուսուցիչ Ժերենը, որ շատ էր բարկանում նրանց վրա, ովքեր ձեռքով, առանց քանոնի և հինգ կոպեկանոցի օգնությամբ, ուղիղ գիծ և շրջագիծ չէին կարողանում քաշել, խոսք չէր գտնում գովաբանելու մեր Վարդգեսին, միշտ նրան մեզ օրինակ էր բերում և գուշակում էր նրան մեծ ապագա. «Տղայք,— ասում էր նա,— ես մեռած, դուք կենդանի, ձեր ընկեր Սուրենյանցը ապագայում մեծ նկարիչ պիտի դառնա, հիշեցեք այն ժամանակ իմ ասածները»»,— հիշում է Սուրենյանցի դասընկեր Երվանդ Շահազիզը:

Ճեմարանում ուսանելիս ապագա արվեստագետը հրապուրված էր ծաղրանկարներով ու ճեպանկարներով: Նրա նկարչական ներուժը նկատում է համաշխարհային հռչակ ունեցող ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին՝ ասելով. «Սա տղան ազգիս հպարտությունը դառնալու է»: Գույնի ու գծի աշխարհը, սակայն, ինչպես քույրն է պատմում, նրան ձգում էր դեռ մանուկ հասակից: Մյունխենյան ուսումնառական տարիներին, գեղանկարչությունից զատ, տիրապետում է գծանկարչությանը, տպագրում ծաղրանկարներ:

Ճանապարհորդում է Իտալիայում, լինում Եվրոպայի հայկական կղզում՝ Ս. Ղազարում. Մխիթարյանների գրադարանում ուսումնասիրում է հայ գրչության արվեստը, մանրանկարչությունը, պահպանված նկարների հիման վրա ստեղծում տեղի երևելիներից Ա. Բագրատունու, Մ. Չամչյանի, Ե. Թովմաճյանի դիմանկարները: Լինում է նաև Պարսկաստանում: Մի կարճ ժամանակահատված գեղանկարչություն և արվեստի պատմություն է դասախոսում Գևորգյան ճեմարանում: Անիում, Սևանում և հայրենիքի այլ վարերում եղած ժամանակ ծանոթանում է պատմական հուշարձաններին, էջմիածնի մատենադարանի հայկական նկարազարդ ձեռագրերին, առնչվում իրեն ծնած ժողովրդի առօրյային ու կյանքին:

Մոսկովյան, պետերբուրգյան գեղարվեստական անցուդարձի եռանդոտ մասնակիցներից ու կազմակերպիչներից էր, ընդունված ու գնահատված՝ նշյալ արվեստային կենտրոնների կողմից. ապացույցը՝ նկարազարդում է ռուս նկարիչների 1-ին համագումարի (նրա կազմակերպիչներից էր) ծրագիրը և ազդագիրը, Կ. Կորովինի և ուրիշների հետ ստեղծում է պաննոներ («Հեռավոր Արևելք»), որոնք զարդարում են համագումարի դահլիճը: Աշխույժ գործակցություն է ունենում նաև 2—րդ համագումարին: Մասնակցում է նկարիչների մոսկովյան, Լեոնարդո դա Վինչիի, Կուինջիի անվան ընկերությունների և պատմանկարիչների (որի միության վարչության անդամ էր) ցուցահանդեսներին: Մտերմական հարաբերություններ է ունենում արվեստի ռուսաստանցի մի շարք մեծերի հետ: 1894-ին «Լքյալը» ստեղծագործությամբ մասնակցում է Պերեդվիժնիկների ընկերության 22-րդ ցուցահանդեսին: Իր գեղանկարչական լեզվով, գունազգացողությամբ ու պատկերաստեղծմամբ այս նկարը նորություն էր հայ կերպարվեստում: Նկարում պատկերված անօթևան հայուհին մարմնավորում է իր ժողովրդի դրամատիկ, անհանգիստ, լարված վիճակը հայրենի հողի վրա:

19-րդ դարի 90-ականներին Սուրենյանցը հայ և համաշխարհային կերպարվեստի գանձարանին ի պահ է հանձնում իր ազգի անցյալի ու ներկայի որոշակի դրվագներ արտացոլող ստեղծագործություններ՝ «Ոտնահարված սրբություն», «Հռիփսիմեի վանքը», «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» (1899) և այլն: Վերջին նկարում, ինչպես նկատված է մասնագիտական գրականության մեջ, Սուրենյանցը նաև իր վերաբերմունքն է արտահայտում Արևմտահայաստանում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:

Ճանապարհորդում է եվրոպական երկրներում՝ Ավստրիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, արդյունքը՝ նոր տպավորություններ՝ վերածված արվեստի մշտահմա գործերի, որոնցից է «Ալհամբրա. Իսպանիա» (1898) չափերով փոքր, բայց մեծարժեք կտավը: Իսպանական շարքը ցուցադրվում է «Պատմանկարիչների միության» 3-րդ ցուցահանդեսում: Այս և նախորդ ճամփորդությունները հղկում են նկարչի ճաշակը, հարստացնում արարական արվեստանոցը:

Բոլորովին նոր կտավներ են 20-րդ դարի 10-ական թթ. ստեղծած գործերը՝ «Անի. կանանց ելքը եկեղեցուց» (1906), «Սալոմե» (1907), «Զաբել թագուհու վերադարձը գահին» (1909), «Ասպետ կինը» (1909), «Ա. Գ. Իդելսոնի դիմանկարը» (1913), «Ֆիրդուսին կարդում է «Շահ-Նամեն» պոեմը Մահմուդ Ղազնևիին» (1913), որոնք առանձնահատուկ տեղ ունեն հայ գեղանկարչության գանձարանում:

«Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսը» դիմանկարը (1906) Սուրենյանցը վրձնել է մի պատմաշրջանում, երբ ցարիզմի հակահայ քաղաքականությունն ուժգնացել էր՝ փակվում էին հայկական դպրոցները, արգելվում էր հայկական պարբերականների հրատարակությունը, որոշվել էր բռնագրավել և պետականացնել Հայ Եկեղեցու գույքն ու կալվածքները: Բնականաբար այս ամենի առնչությամբ ասելիք ու անելիք պիտի ունենար Հայ Եկեղեցու գահակալը՝ ի պաշտպանություն առաջնորդյալ Եկեղեցու ու հոտի: Մեծ արվեստագետը ծերունազարդ Հայրապետին պատկերել է՝ աթոռին նստած, ձեռքերը բռունցքած, առջևում՝ գետնին նետված հակահայ հրահանգ պարունակող ցարական չբացված նամակը: Թվում է՝ Ամենայն Հայոց Հայրապետը պիտի զայրացած լիներ, աչքերում վառվեր ատելություն, բայց, ոչ, Խրիմյան Հայրիկի հայացքը հանդարտ է, զուսպ, թվում է՝ աչքերում անգամ մի փոքր պայծառություն, կայծ կա, կեցվածքն անվրդով է և ինքնավստահ: Մեծ արվեստագետը, Կաթողիկոսին նման կերպ ներկայացնելով, հավանաբար կամեցել է ցույց տալ նրա վստահությունն առ այն, որ ոչ մի օտար նվաճող ի զորու չէ հայ ժողովրդից խլելու իր ինքնությունը, որ հայ ժողովուրդն իր իմաստուն էության ու պայքարի շնորհիվ դա թույլ չի տա, որ նման փորձերը միշտ՝ իբրև չբացված, անպատասխան նամակ, գետնին կնետվեն, և այս ամենը՝ ոչ միայն իբրև Հայ Եկեղեցու առաջնորդի համոզմունք, այլև որպես բացարձակ ճշարտություն, պատգամ՝ հղված իր ժողովրդին:

Սուրենյանցը հայ արվեստի կյանքի կազմակերպիչներից էր նաև. 1915-ին Ա. Քալանթարյանի, Ն. Ադոնցի, Տ. Տեր-Վարդանյանի և նրա նախաձեռնությամբ Պետերբուրգում ստեղծվում է «Գեղեցիկ արվեստների հայկական ընկերություն»-ը, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյանի, Փ. Թերլեմեզյանի և ուրիշների հետ համագործակից՝ 1916-ին Թիֆլիսում հիմնադրում է «Հայ արվեստագետների միություն»-ը:

Կերպարվեստագիտությունը Սուրենյանցի որոշ գործերում նկատել է մոդեռն ոճի ազդեցությունը: Ուսումնասիրողները նրա արվեստում նկատել են նաև տարրեր, որ հիշեցնում են հայ մանրանկարիչների գունապլաստիկական պարզությունը, իր ժամանակի եվրոպացի որոշ արվեստագետների գունային, գրաֆիկական հնարքների պայմանականությունը:

Սուրենյանցի տաղանդը առանձնահատուկ փայլ է տվել նաև հայկական գրաֆիկային, հայկական և ռուսական գրքի նկարազարդման արվեստին: Դեռևս 1899-ին Մոսկվայում «Կնեբել-Գրոսմանի» հրատարակչությունը հայ մեծ նկարչի ձևավորմամբ լույս է ընծայել Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմը՝ ամենայն ռուսիո բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առթիվ: Պատկերազարդել է Ա. Ծատուրյանի «Գրչի հանաքները», Օ. Ուայլդի «Երիտասարդ թագավորը», «Արքայադստեր ծննդյան տոնը», «Օձամանուկ և Արևահատ»-ը, «Մոխրոտը», «Գառնիկ ախպեր»-ը, «Իմաստուն օձը», հայկական ժողովրդական հեքիաթներ, Մետերլինկի «Կույրերը», «Այնտեղ՝ ներսում», «Անկոչը» թատերգությունները, Լ. Տոլստոյի «Հաջի Մուրադ»-ը, Ժ. Ռոդենբախի, Ս. Լագերլյոֆի և այլոց երկերը: Սուրենյանցական հիշյալ նկարազարդումները 20-րդ դարի գրաֆիկական արվեստի բարձրամակարդակ նմուշներ են: Մ. Սարյանի հետ նկարազարդել է նաև Վ. Բրյուսովի կազմած «Հայ պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» անթոլոգիան: Հայկական ստեղծագործություններ ձևավորելիս նրա համար ազդակ և ակունք է եղել ազգային մանրանկարչությունը:

Սուրենյանցական անսպառ, անհատնում տաղանդի ուժը դրսևորվել է նաև բեմում: Նա 20-րդ դարասկզբի ռուսական թատրոնի նշանավոր բեմանկարիչներից էր. 1901-ին Պետերբուրգի Մարիինյան թատրոնում Սուրենյանցի ձևավորմամբ բեմադրվել են Ա. Ռուբինշտեյնի «Դև» օպերան, 1904-ին Մոսկվայի գեղարվեստական թատրոնում՝ Մ. Մետերլինկի «Կույրերը», «Այնտեղ՝ ներսում», «Անկոչը» պիեսները, Պ. Յարցևի «Վանքի մոտ» դրաման, 1905-ին՝ Ա. Չեխովի «Ճայը» դրաման, 1906—1907-ին Վ. Կոմիսարժեսկայայի թատրոնում՝ Հ. Հեյբորգի «Սիրո ողբերգությունը» և այլն:

Վարդգես Սուրենյանց, «Լքյալը», 1894 թ.: Հայկական ջարդերից փրկված աղջնակը պաշտպանություն է փնտրում եկեղեցու բակում:

Չեխովն ու Սուրենյանցը ծանոթացել էին 1890-ականների վերջին Ղրիմում, որտեղ նկարիչն աշխատում էր Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» նկարազարդումների ուղղությամբ: Հենց Սուրենյանցն է Նեմիրովիչ-Դանչենկոյի կողմից հրավիրվել՝ որպես նկարիչ-բեմահարդար աշխատելու Չեխովի «Ճայ»-ի ձևավորման համար: Սակայն հայտնի է, որ դեռևս Մոսկվայի գեղարվեստական թատրոնի հրավերից առաջ Սուրենյանցին դիմել է Չեխովը. «Հարգելի Վարդգես Ակոպովիչ, վստահ եմ, որ հենց Դուք պետք է ձևավորեք «Ճայը»: Ինձ համար դա շատ կարևոր է»: Սուրենյանցի առջև պատասխանատու խնդիր էր դրված. «Ճայի» առաջին բեմադրությունը խայտառակ կերպով տապալվել էր, և Չեխովին տանջում էին սևեռուն վախերը: Սակայն պիեսի վերաբեմադրությունը մեծ հաջողություն է ունենում, և հաջողության գրավականներից ոչ վերջինը Սուրենյանցի բեմանկարներն էին: Չեխովը բարձր է գնահատել հայ նկարչի աշխատանքները, Սուրենյանցը գրողին նվիրել է իր մի քանի յուղաներկ աշխատանքներ:

Սուրենյանցը նաև ուսումնասիրող, քննող, որոնող, մտային զորեղ կարողությունների տեր էր. վկայությունը՝ «Մի քանի խոսք եվրոպական նկարչության մասին», «Հայոց ճարտարապետության տեղը գեղարվեստի պատմության մեջ», «Գեղարվեստի նորագույն հոսանքները և հայկական ճարտարապետությունը» ուսումնասիրությունները, «Կլասիկ գեղարվեստի մասին» դասախոսությունը, որոնցում հառնում է պատմաբան, ազգագրագետ, ճարտարապետության և արվեստի տեսաբան Սուրենյանցը: Նա նաև մշակել է հայկական ճարտարապետական կոթողները վերականգնելու յուրահատուկ, ժամանակակից եղանակներ՝ «Հաղագս վերանորոգության տաճարի Սբ. էջմիածնո», «Դարձյալ էջմիածնի վերաշինության մասին»:

Գեղարվեստի հրաշագործ ու գիտակ լինելուց զատ՝ Վարդգես Սուրենյանցը միաժամանակ լեզվագետ էր. տիրապետում էր ռուսերենին, անգլերենին, գերմաներենին, իտալերենին, ֆրանսերենին, իսպաներենին, պարսկերենին և թուրքերենին: Կատարել է բնագրային թարգմանություններ Շեքսպիրից, Գյոթեից, Հայնեից, թարգմանել է Հ. Շիլտբերգերի «Ճանապարհորդություն» գրքի Հայաստանին վերաբերող հատվածը և այլն:

Չնայած Սուրենյանցը կրթվել, որպես արվեստագետ ձևավորվել էր հայրենիքից հեռու, այնուհանդերձ հայ էր ողջ էությամբ, արյան բաղադրությամբ և մեծ հայրենասեր էր: Երվանդ Շահազիզը հիշում է, որ իրենց հանդիպումներից մեկի ժամանակ գեղանկարիչն ասել է. «Արդյոք մի օր էլ լույս աստղ կծագի՞ մեր հարազատ երկրում, որ կարողանանք խաղաղ, անդորր մեր հացուջրով ապրել, մեր մաքուր օդով շնչել, մեր հովուզովով լիանալ, մեր հալալ աշխատանքով հագենալ. մեր տառապանքին արդյոք վերջ կլինի՞»: Սուրենյանցի հայրենասիրությունը պարզորոշ երևում է նրա ստեղծած արվեստից: Շահազիզի հուշերից իմանում ենք նաև, որ Սուրենյանցը է եղել Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի մտահղացման հեղինակը: Նա է հորդորել Սպենդիարյանին հայերի պատմական անցյալից Թումանյանի ստեղծագործության նյութով մի օպերա գրել, և որպեսզի «հրահրած լինի նրան», ինքը նախապես պատրաստել է դեկորացիաները և գործող անձերի զգեստների նկարները:

Քահանայի որդի Սուրենյանցը՝ Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալ զավակը, կյանքի վերջին օրերն անցկացնում է Յալթայի հայկական եկեղեցու տիրաշունչ հարկի ներքո. այնտեղ ստեղծում էր եկեղեցու որմնանակարները:

Մահացել է 1921 թ. ապրիլի 6-ին և թաղվել նույն եկեղեցու բակում:

Հայ պատմանակարչության մեջ Սուրենյանցի կտավների շնորհիվ հավերժական կերպավորում ստացան Կիլիկիո Զապել արքայուհին, Գրիգոր Լուսավորիչ, Մակար Թեղուտցի, Խրիմյան Հայրիկ հայոց հայրապետները, Արա Գեղեցիկը, սովորական հայ մարդիկ, եղեռնից փրկված վասպուրականցի, շատախցի, մոկացի, վանեցի, բիթլիսցի, սասունցի և այլ գաղթականներ՝ իրենց տարազներով, էջմիածնի Մայր տաճարը, Հռիփսիմեի վանքը, Անիի Աղջկանց վանքը և այլն: Սուրենյանցի արվեստի աշխարհում տեղ ունեն նաև օտարները՝ Ֆիրդուսի, Սալոմե, Շամիրամ, Աննա Գրիգորևնա Իդելսոն, Շահ Մահմուդ Ղազնևի....

Վարդգես Սուրենյանցը, հայ պատմանակարչության առաջնորդը լինելուց զատ, հայ բնանկարչության, եկեղեցանկարչության, սրբանկարչության հռչակավոր վարպետներից է: Առանձնանշելի է «Տիրամայրն ու մանուկ Հիսուսը» կտավը՝ Մարիամ Աստվածածնի նորովի կերպավորմամբ: Սուրենյանցի կտավներում Հայ Առաքելական Եկեղեցին ներկա է տիրականորեն: Նրա արվեստը մի եդեմական եզերք է մեր կերպարվեստի աշխարհում:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ),
բ. գ. թ.

Վարդանանց պատգամը ներկային

Տոներն առհասարակ ուրախության և ցնծության առիթներ են, որոնց միջոցով հասարակություններն իրենց միապաղաղ առօրյան երանգավորում են, մի պահ վերանում առկա իրականությունից: Ազգային և եկեղեցական տոները, բերկրանքի և հպարտության միախառնությանը զուգահեռ, առիթ են նաև ինքնաքննության, անցած ճանապարհը վերարժևորելու, հիշատակելով անցյալը՝ իմաստուն լուծումներ գտնելու ներկայի համար, ոգեկոչելով անցյալի հերոսներին և նրանց անցած ուղին՝ սովորելու նրանցից և ընթացքը ճիշտ կազմակերպելու: Յուրաքանչյուր տոն, որ ժողովուրդները նշում են, պատգամ ունի ներկայի համար, պատգամ, որ ի զորու է իրավիճակ փոխելու, բարդություններ հաղթահարելու և նոր գաղափարներով զինելու:

Սովորաբար ժողովուրդները նշանավորում են տոներ՝ հիշելու իրենց անցյալը, արժևորելու ներկան և զինվելու գալիքի համար: Այն ժողովուրդները, որոնք իրենց ազգային ու եկեղեցական տոներին այս դիտանկյունից չեն վերաբերվում, այդ տոները վերածում են սոսկ սովորույթի՝ զուրկ նշանակությունից և նպատակից:

Մեր ժողովուրդը ևս ունի բազմաթիվ տոներ, որոնք նշում է մերթ սովորույթի ուժով, մերթ գիտակցաբար և նպատակաուղղված:

Ներկա ժամանակին շատ կարևոր պատգամ հղող տոներից է Վարդանանց տոնը: Ամեն տարի հիշատակվում է այս տոնը, և որոշ մարդիկ անգիտակցաբար դժգոհում են հիշատակության ամենամյա պարբերականությունից, կրկնվող նույնությունից: Այդ մոտեցումը գուցե մասամբ ճիշտ լիներ, եթե տոնին վերաբերվենք սոսկ որպես անցյալի իրադարձության: Բայց, ինչպես նշեցի, տոնակատարությունները մենք պետք է ընկալենք ոչ միայն անցյալ ժամանակով, այլև ներկայի կտրվածքով՝ խորհուրդներ քաղելով օրվա համար:

Մենք այսօր նույնը չենք, ինչ էինք մի տարի առաջ: Անցյալ տարի Վարդանանց տոնից մեզ ուղղված պատգամն անպայմանորեն այսօր նույնը չի կարող լինել, նոր ըմբռնում զգեցած կլինի:

Հանրահայտ է, որ այսօր ազգովին ապրում ենք շատ բարդ ժամանակաշրջանում և գոյութենական պայքար ենք մղում: Վերջին տարիներին կորցրինք մեր հայրենիքի մի մասը, թշնամու կողմից բռնագրավվեցին հայրենական հողեր: Այս բոլորի դիմաց, ցավոք, մենք՝ որպես ազգ, համարժեք գործողություններ չենք իրականացնում, ընդհակառակը՝ պարտվողական դիրքերից հանդես գալով՝ խաղաղություն ենք մուրում թշնամուց:

Խաղաղությունը մուրալով չի տրվում, այլ պայքարով է ձեռք բերվում: Ահա այս տարվա Վարդանանց տոնից մեզ հղվող գլխավոր պատգամը: Վարդան Մամիկոնյանն ու նրա գաղափարակիցները ինչ դիրք որդեգրեցին իրենց պարտադրված սպառնալիքի դիմաց՝ պայքար հանուն ազգային անվտանգության:

Վարդանանց հերոսները շատ լավ գիտակցում էին իրենց խաչը, սակայն հայրենիքի գերադաս սերը, Սուրբ Եկեղեցու և հավատքի նկատմամբ բացարձակ նվիրումն ու ջերմեռանդությունը նրանց մղում էին դիմադրելու: Նրանք գիտակցում էին, որ թշնամին անհամեմատելիորեն զորեղ է իրենցից, սակայն հայրենասիրությունն ու աստվածասիրությունը շատ ավելի ուժեղ էին, քան թշնամու երևելի զորությունը:

Սեր, նվիրվածություն և հավատարմություն՝ երեք արժեք, որ ներկայում բացակայում է մեր կյանքից:

Արդարև, եթե սեր ունենայինք, չէինք համարձակվի հայտարարել, թե մեր երկրի մի մասը թշնամունն էր:

Եթե նվիրվածություն ունենայինք, հակառակ ամեն տեսակի դժվարությունների՝ կպայքարեինք հանուն մեր երկրի անվտանգ խաղաղության և մանավանդ հանուն արդարության:

Եթե հավատարմություն ունենայինք մեր արմատներին, մեր անցյալին, մեր նախնիներին, ապա կգիտակցեինք մեզ ավանդված արժեքը և ներկայում, իբրև թե խաղաղ ապրելու համար, ինքներս մեզ, մեր երկիրը չէինք նվաստացնի:

Հաջորդ կարևոր պատգամը, որ պետք է այսօր յուրացնենք Վարդանանցից, նրանց ոգին է: Վարդանանց ոգին, արդարև, մեր ազգային կենսունակության և դիմագծի առհավատչյան է, առանց որի մենք մեր ազգային ինքնությունն ու արժեհամակարգը կկորցնենք: Վարդանանց հերոսների ոգու գրավականը հայրենյաց հանդեպ նրանց բացարձակ սերն ու նվիրումն էր: Այսօր փորձ է կատարվում այդ ոգին խամրեցնելու մեր մեջ՝ մնայուն կերպով օտար բարքեր, սովորույթներ և «արժեհամակարգեր» ներմուծելով մեր առօրյա: Օտարամոլությունը, հայրենիքը մաս առ մաս հանձնելը, թուլամորթությունը դարձել են բնական և խրախուսվող երևույթներ: Մի պահ պատկերացնենք՝ եթե Վարդանանք ևս նույն մոտեցումը կամ ընկալումն ունենային, ինչպե՞ս կվճռվեր մեր ժողովրդի ճակատագիրը:

Այսօր ավելի, քան երբևէ, մենք կարիքն ունենք Վարդանանց ոգու վերազարթնումի մեր մեջ, որպեսզի կարողանանք ամուր պահել մեր արմատները, հավատարիմ մնանք մեր նախնիներին, արժանավայել պահպանենք նրանց ժառանգությունը և այն ավելի զորացրած՝ փոխանցենք սերունդներին:

Վարանդ (Հակոբ) ՔՈՐԹՄՈՍՅԱՆ

Անդրանիկ Զորավար — 160

↩ էջ 6

Որոշված օրը ձորի երկու կողմեն ալ գործողություն ձեռնարկելով, կփորձեն բանալ ճանապարհը: Սակայն Գորիսի շրջանի տեղական ժողովրդի չկամության, օգնության չհասնելու և Շուշինսկի պոլկի և բոլկովնիկի կողմե անտակտ և թեթև վերաբերմունքի հետևանքով ղարաղշլաղցիք կմնան միանակ, և թուրքերը, համարձակություն ստանալով, Թերեքեմի հետ միասին կքանդեն ու կայրեն գյուղը, իսկ բնակչությունը կգաղթէ դեպի Շուշի:

Այս հաջողութենեն քաջալերված տեղական թուրքերը կփորձեն երկու ճակատով հարձակել Զանգեզուրի վրա՝ Կորինձոր և Խանածախ-Խոզնավարի ուղղությունով: Այդ հարձակման հետևանքով Զանգեզուրի ազգային խորհուրդն ու ազգաբնակությունը կրկնակի պատգամավորություններով և համախոսականներով կխնդրեին, որ իմ զորամասով շտապ իրենց օգնության փութամ: Այս կոչերուն անշուշտ չէի կրնար անտարբեր մնալ, ուստի սեպտ<տեմբերի> 16-ին շարժվեցա դեպի Գորիս: Մինչև հասնելս, սակայն, շնորհիվ ռազմամթերքի առատության, տեղական ու գաղթական զինված ուժերուն հաջողվել էր ետ մղել հարձակվողները, պատճառելով անոնց զգալի կորուստ՝ 300 մարդ:

Մինչև այդ, հարաբերությունը Շուշվա հետ կտրված էր, մանավանդ Ղարաղշլաղի այրումով: Այդ օրերուն տեղի թուրք և հայ իշխանությանց հրահանգով Շուշուց Գորիս եկան 3 զանգեզուրցիներ՝ պատմելու այն, ինչ որ տեսած էին այնտեղ: Անոնք պատմեցին, որ թուրքերը գրաված են Բաքուն, մտած են Շուշի, ու սեպտ<տեմբերի> 24-ին մի քանի գյուղ քանդելե վերջ, որ քաղաքը հանձնված է և զինաթափ եղած, որ քաղաքի զինված ուժը քաշվեր է գյուղերը, և թե շրջանները ոչ մի պայմանով չեն ուզեր հպատակվել. միաժամանակ թուրքերը ուղարկած էին պաշտոնագիրներ Գորիս բնակվող զանազան անձնավորություններու՝ նշանակելով անոնց գայմագամ և օգնական Գորիսի և Սիսիանի:

Շուշիի անկման լուրը ազդեց Զանգեզուրի տրամադրության վրա: Եղավ ընդհանուր ներկայացուցչական ժողով, որ առաջի դիրքի վրա գտնված գյուղերու որոշումն էր՝ անպայման կռվել, իսկ քաղաքացիներեն մեկ մասը երկմիտ էր: Վրդովված քաղաքացիներու ցույց տված այդ վերաբերմունքեն, մասամբ քաշվեցա Սիսիան, ուր շրջ<անի> ներկ<այացուցչական> ժողովը, նկատի ունենալով բոպեի լրջությունը, միաձայն որոշեց կռվել և հետևաբար հայտարարեց II զորակոչ՝ մինչև 40 տարեկաններու: Այս զորակոչի հետևանքով կազմվեցավ նախկին 3-ի հետ միասին ընդամենը 7 բոտա, որոնց վրա ավելացնելով իմ զորամասի 3 բոտան, Շուշինսկի 1 բոտան և Գանձակի 1/2 բոտան, կլինի ընդամենը 111/2 բոտա:

Այդ միջոցին կրկին անգամ բազմաթիվ պատգամավորներ զանազան գյուղերե եկան ինձ խնդրելու, որ օգնության գամ Զանգեզուրին, քանի որ նա կգտնվի թուրքական անմիջական սպառնալիքի տակ, և որ ժամեժամ կսպասվի թուրքերու հառաջխաղություն և քաղաքի անձնատվություն, որ Զանգեզուրի շրջ<անի> ներկ<այացուցչական> ժողովը միաձայն որոշած է կռվել, որ այդպիսի որոշում է տված և Ղափանը: Կրկին մեկնելով Գորիս՝ այնտեղ հայտարարեցի մոպիլիզացիա 20—45 տարեկաններու, թե Սիսիանի, թե Զանգեզուրի և թե Ղափանի մեջ ժողովրդի տրամադրությունը բարձրացավ: Բարձրացավ մանավանդ, երբ լուր ստացվեց, որ Հայաստանը միացած է դաշնակիցներուն, որ Բուլկարիան զինաթափ է եղած, որ Զաթալճան կռմբակոծվի, որ թուրք զորքերը կքաշվեն թե Բաքվի և թե Պարսկաստանի ֆրոնտը:

....Կա նաև 2 դաշտային թնդանոթ 400 <անընթ.> և 8 փուլեմյոթ. միայն շատ կնեղվենք պատրոնի պակասութենեն, եթե ոևէ անհաջողություն լինի, պատճառը միայն այդ պիտի լինի:

Այժմ կգտնվիմ Գորիս. չեմ գիտեր ուրիշներ ինչ կխորհեն, և կենթադրեմ, թե իմ ըրածի մասին լավ չեն խորհիր ու խոսիր, բայց անհամեստություն չի լինի, եթե հայտնեմ ոչ միայն իմ, այլև ամբողջ Զանգեզուրի, Ղափանի և Սիսիանի ազգային խորհուրդի և մանավանդ հայ ժողովրդի համոզումն է, որ եթե մինչև այսօր թուրքական ոևէ ուժ չէ մտած Զանգեզուրի կամ Սիսիանի կամ Ղափանի շրջանը, այդ բանը արդյունք է միայն իմ և իմ զորամասի ներկայության այդ շրջաններու մեջ:

Ինչպես անցյալի մեջ զորամասի ավելի արդյունավոր գործունեություն ունենալուն արգելել է առաջին՝ գաղթականության, երկրորդ՝ տեղական կազմակերպություններու թերությունն ու անգործունեությունը, թուլությունը. այսօր ևս այդ երկու գործոնները մեծ չափով արգելք են արդյունավետ գործունեության: Զանգեզուրի և Սիսիանի շրջանին մեջ տասնյակ հազարավոր տաճկահայ, ռուսահայ, նախիջևանցի գաղթականությունը մերկ ու սոված թափված է դաշտերու, ձորերու մեջ:

Ներկա ցուրտ եղանակին դեռ հազարներով գաղթականություն մնացած է, չէ տեղավորված և ոչ մի ապահովություն չունի վաղվա ուտեստի մասին: Օրական հարյուրով կմեռնին անտեր և կմնան անթաղ, որոնց հանդեպ պարզ է, որ անտարբեր չեմ կարող մնալ:

Երևանեն հայությունը, դուրս չելալով իր կաշիեն և Բաթումի դաշնագրեն, չուզեր ոչ մի օգնություն ցույց տալ այս շրջանի գաղթականության և կապ պահել այստեղի կազմակերպություններու հետ, կարծեք այստեղի հայությունը խորթ լիներ. նույնիսկ այստեղեն ղրկված հատուկ պատգամավորության (Արտակ Շիրինյան) պատասխաներ էին, թե «պետք է ամեն զիջում ընենք, նույնիսկ զինաթափ լինենք և գանք հեռացնենք Անդրանիկին», «խաչ քաշենք այդ հայության վրա», և մերժեց ռազմամթերքի և այլ օժանդակության մասին կատարված պաշտոնական դիմումը: Ահա այս տեսակ ցինիկ և ստրկական խորհուրդներ տալե վերջ այդ հայկ<ական> կառավարությունը այսօր միայն լայն օրերուն կանդրադառնա Ղարաբաղի վրա և կուզե տեղական զինվոր<ական> կազմակերպություն հառաջացնել՝ Ղարաբաղի մասին Ադրբեջանի հետ բանակցություններ կատարելու ժամանակ ռեալ ուժերու վրա հենվելու համար, մի բան, որու համար ուշացեր է: Իսկ տեղական կազմակերպություններու գործունեությունը բոլորովին անբավարար, անբանական է, ամբողջ հոգսը ծանրացած է իմ վրա: Զոհաբերության ոչ մի եռանդ չի նշմարվիր այս ժողովրդի և ղեկավարներու մեջ: Դուրսեն զորամասիս համար ոչ մի կոպեկ օգնություն չեմ ստացած:

Լսեր և կարդացեր եմ, որ, անշուշտ, կարճմիտ և կամ քինախնդիր-նախանձոտ դիվանագետներ ինձ կմեղադրեն Լոռիի և Նախիջևանի հայության պատահած դժբախտություններու պատճառով: Այդ մարդիկը, չեմ գիտեր, Բաքուի, Գյոքչայի, Ղարսի շրջանի, Բերրիի, Վանի շրջանի և ամբողջ տաճկահայության գլխուն եկած փորձանքներուն ու արհավիրքներուն համար ալ մի՞թե ինձ մեղավոր չեն համարեր: Այդ ամենքի մասին ունիմ իմ փաստաթղթերը, բացի անոնցմե, որոնք արդեն հրատարակված են:

Երկու անգամ է՝ Շուշուց սուրհանդակ և նամակ կստանանք: Այստեղ միշտ սպասող են մեզ. շրջանին մեջ՝ Հադրութի ճանապարհին, Ճարտար ուղարկել են թուրքական 400 զինվոր՝ 4 թնդանոթով և փուլեմյոթով՝ ճնշելու: Բայց հայերը Սոկրատ բեկի ղեկավարությամբ զանոնք բոլորը կոտորած և փուլեմյոթները գերած են:

Արտաքին աշխարհեն ստացված լուրերը ցույց կուտան, թե պատմական բոպեներ է, որ կանցնինք, ամեն կողմ՝ Շուշի, Նախիջևան, Մեղրի, Տաճկահայաստան գործողության համար ֆրոնտ ունինք, և եթե այս բոպեիս չշարժվինք, ապագա սերունդները մեզ պիտի դատապարտեն: Դժբախտաբար, սակայն, ժողովուրդը և իր ղեկավարները թե գաղթականության և թե գործի հանդեպ այնպիսի հանցավոր անտարբերություն ցույց կուտան, որ ուղղակի վիատեցուցիչ է: Երբեք բոպեն չեն ըմբռնած կարծեք: Համենայն դեպս երևի շուտով կշարժվեմ դեպի Շուշի՝ այնտեղի դրությունը շտկելու համար, իսկ անկե վերջ ոչինչ կարելի չէ ըսել և նախատեսել: Կսպասիմ դեպքերուն կամ թե չէ շուտով բախտը կունենամ Ձեզ տեսնելու:

Բայց ինձ համար մեծագույն անբախտություն է, որ աշխարհե կտրված ենք. ոչ ուրիշներ մեր գործունեութենեն տեղեկություն ունին, ոչ ալ մենք ուրիշներուն գործունեութենեն: Եվ միակ մտահոգությունս է, որ մեր պոռնիկացած, ստրկացած դիվանագետները այս անգամ ևս չպաշտպանեն տաճկահայ դատը, և այդ դժբախտ ժողովրդի այնքան արյունն ու տառապանքը ու խոյանքները մնան անհետևանք, և անոնց դիակներու կույտին ու վշտին վրա ուրիշներ, շահագործողներ կերտեն իրենց դիրքը, փառքը:

Նամակները տրամադրեց «Հովհաննես Թումանյան» թանգարանը

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 3.03.2025 թ.
Տպաքանակը՝ 1265